

Նախնական մասնագիտական կրթությունը և ուսուցումը (ՆՄԿՈՒ) Եվրոպայում

Վերանայում

Քաղվածք

Վերանայումը հիմնված է նախնական մասնագիտական կրթության և ուսուցման (ՆՄԿՈՒ) ոլորտում եվրոպական 25 երկրի ReferNet-ի ազգային կոնսորցիումի կողմից գրված ազգային զեկույցների համեմատական վերլուծության վրա:

Այն ապահովում է ընդհանուր պատկերացում փոփոխությունների, միտումների ու բանավեճերի մասին և որոշարկում է գլխավոր հիմնախնդիրները: Այն նաև ամփոփում է, թե ինչպես են վերջիններիս լուծում տալիս ՆՄԿՈՒ ազգային քաղաքականությունները և ապահովում է որոշակի ընդհանուր կողմնորոշումներ ու քաղաքականության նպատակներ երկրների շրջանում:

ՆՄԿՈՒ կառուցվածքն ընթերցողին ապահովում է ցածր, ավագ և հետմիջնակարգ ՄԿՈՒ իրականացման համապարփակ տեղեկատվություն և ավելի բնորոշ ուրվագիծ: Դեպի ուսուցում մուտքի հնարավորությունը սահմանող հիմնական պայմանները, երկրների՝ մասնակցությունը խթանելուն ուղղված տարբեր նախաձեռնությունները, ինչպես նաև ուսումնական ծրագրերի մշակման տարբեր մեխանիզմներն ու ուսումնառության արդյունքները նույնպես բնութագրվում են:

Զնայած ՆՄԿՈՒ-ն մեծ չափով տարբերվում է և՛ երկրներում, և՛ իրականացման տեսակով կամ ձևաչափով, սակայն սույն համապարփակ վերանայումը տրամադրում է էական եզրակացություններ, որոնք ամփոփում են ՆՄԿՈՒ հիմնական միտումները Եվրոպայում:

Նախաբան

Մասնագիտական կրթությանն ու ուսուցմանը մասնակցության մեծացումը մրցունակությունը կատարելագործելու եղանակներից մեկն է, ուստի և եվրոպական մի քանի քաղաքականությունների կիզակետը: Սոցիալ-տնտեսական արդի այնպիսի հանգամանքները, ինչպիսիք են գլոբալիզացիան, վերակառուցումը, նորարարությունը և անցումը գիտելիքահենք տնտեսություն, պահանջում են ավելի որակյալ աշխատուժ: Եվրոպացի բնակչության ծերացման պատճառով նախնական մասնագիտական կրթությունը և ուսուցումը, որպես նոր մասնագետներ մատակարարող համակարգ, ներկայացնում է առանցքային կարևորություն:

Նախնական մասնագիտական կրթության և ուսուցման արդիականացումը ԵՄ և անդամ պետությունների մակարդակում ընթացիկ քննարկումների հիմնական թեմաներից մեկն է: Մասնագիտական կրթության և ուսուցման գրավչությունն ու վարկանիշը բարձրացնելու համար մենք պետք է կատարելագործենք դրա որակը և աշխատաշուկայի կարիքներին արագ արձագանքելու հնարավորությունը: Գիտելիքն այն մասին, թե ինչպես են տարբեր անդամ պետությունները պայքարում այս մարտահրավերների դեմ, շատ էական է՝ զնահատելու փորձն ու հաջողությունը:

Cedefop-ը տարբեր եղանակներով ցուցաբերում է աջակցություն՝ ներառյալ ԵՄ անդամ բոլոր պետությունների նախնական մասնագիտական կրթության և ուսուցման համակարգերի թեմատիկ մանրամասն վերլուծությունների պատրաստումը (կարելի է ձեռք բերել եվրոպական կրթական մեր կայքէջից): Բացի այդ, նախնական կրթական տարբեր համակարգերի համեմատական մանրամասն վերլուծությունը հեշտացնում է վերլուծական աշխատանքը և ապահովում է ամփոփ ու պարզեցված տեղեկատվություն ընդհանուր և տարբեր առանձնահատկությունների մասին: Վերջապես, սույն վերանայումն ապահովում է զլխավոր հիմնախնդիրների, հիմնական միտումների ու եզրակացությունների համապարփակ ամփոփում:

Սույն զեկույցի նպատակն է նպաստել Եվրոպայում նախնական մասնագիտական կրթության և ուսուցման բնորոշ հիմնական գծերի մասին համընդհանուր ընկալմանը, իսկ համեմատական մանրամասն վերլուծությունը կարելի է ձեռք բերել առցանց՝ եվրոպական կրթական կայքէջում (www.trainingvillage.gr):

Ավիանա Բուլգարելի

Տնօրեն, Cedefop

Երախտիքի խոսք

Կցանկանայինք շնորհակալություն հայտնել Cedefop-ի մեր գործընկերներին համագործակցության և օգտակար մեկնաբանությունների համար, հատկապես Cedefop-ում նախագծի ղեկավար Գիորգի Իսպանկիին սույն զեկույցի նախագծումը ղեկավարելու համար:

Cedefop-ն իր երախտագիտությունն է հայտնում Ջբաղվածության հետազոտության ինստիտուտի, Ուորիկի համալսարանի աշխատակիցներ Թ. Հոգարթին, Մ. դե Հոյիսին, Լ. Գամբինին, Ռ. Ա. Ուիլսոնին և Ա. Բրաունին իրենց ունեցած ավանդի համար: Նրանք իրականացրել են նախնական մասնագիտական կրթության ու ուսուցման վերլուծությունները և ամփոփել են ReferNet-ի (Cedefop-ի՝ մասնագիտական կրթության և ուսուցման փորձագիտության համացանց) կողմից պատրաստված ազգային մանրամասն զեկույցների տրամադրած տեղեկատվությունը: Անդամ բոլոր պետությունների (նաև Իսլանդիա և Նորվեգիա) համար տարբեր թեմաների վերաբերյալ մանրամասն զեկույցները կարելի է ձեռք բերել առցանց՝ Cedefop-ի՝ ՄԿՈՒ ազգային համակարգերի մասին տեղեկատվության եվրոպական կրթական կայքէջում (www.trainingvillage.gr):

Բովանդակություն

1. Ծանոթագրություն.....	6
2. ՆՄԿՈՒ, Լիսաբոնի ռազմավարություն և քաղաքականության վերջին զարգացումներ.....	8
2.1 Լիսաբոնի ռազմավարություն և ՆՄԿՈՒ կարևորություն.....	8
2.2 Քաղաքականության վերջին զարգացումներ.....	10
3. ՆՄԿՈՒ զարգացում.....	12
3.1. ՆՄԿՈՒ բարեփոխում.....	12
3.2. ՆՄԿՈՒ սահմանում.....	12
3.3. ՆՄԿՈՒ կառուցվածք.....	13
3.4. ՆՄԿՈՒ մասնակցություն.....	14
3.5. ՆՄԿՈՒ բովանդակություն.....	16
3.6. Եվրոպական չափորոշիչներ.....	16
4. ՆՄԿՈՒ վերջին բարեփոխումներ և զարգացում.....	17
5. ՆՄԿՈՒ-ն ցածր միջնակարգ մակարդակում.....	20
6. ՆՄԿՈՒ-ն ավագ միջնակարգ մակարդակում.....	22
6.1. Իրականացման կառուցվածքը.....	22
6.2. Մուտքի հնարավորության պահանջներ և մասնակցություն.....	23
6.3. Ուսումնական ծրագրեր և որակավորումներ.....	25
6.4. Արդյունքներ և առաջընթաց.....	29
7. Աշկերտություն.....	32
7.1. Իրականացման կառուցվածքը.....	32
7.2. Մուտքի հնարավորության պահանջներ.....	33
7.3. Մասնակցության խթանում.....	33
7.4. Ուսումնական ծրագրեր.....	34
7.5. Արդյունքներ.....	35
8. Հատուկ ծրագրեր.....	36

8.1. Իրականացման բնույթը.....	36
8.2. Մուտքի հնարավորության պահանջներ.....	38
8.3. Ուսումնական ծրագրեր.....	39
8.4. Արդյունքներ.....	40
9. Հետմիջնակարգ, ոչ բարձրագույն ՆՄԿՈՒ.....	42
9.1. Իրականացման կառուցվածքը.....	42
9.2. Մուտքի հնարավորության պահանջներ.....	43
9.3. Ուսումնական ծրագրեր.....	43
9.4. Ուսումնառության արդյունքներ.....	44
10 Բարձրագույն մակարդակի ՆՄԿՈՒ.....	45
10.1 Իրականացման կառուցվածքը.....	45
10.2 Մուտքի հնարավորության պահանջներ.....	47
10.3 Ուսումնական ծրագրեր.....	48
10.4 Արդյունքներ.....	50
11 ՆՄԿՈՒ տիպաբանություն.....	51
12. Եզրակացություն.....	54
13. Երկրների կոդեր.....	57
14. Գրականության ցանկ.....	58

Աղյուսակների և գծապատկերների ցանկ

Աղյուսակներ

Աղյուսակ 1:	Երկրների դասակարգումն ըստ ցածր միջնակարգ մակարդակում ՆՄԿՈՒ իրականացման.....	20
Աղյուսակ 2:	Ծրագրերի իրականացում՝ օժանդակելու մտավոր անկարողունակներին.....	37
Աղյուսակ 3:	Երիտասարդական այլ ծրագրեր մուտքի հնարավորության պահանջներ.....	39
Աղյուսակ 4:	Բարձրագույն ՆՄԿՈՒ իրականացման տեսակներ.....	46
Աղյուսակ 5:	ՆՄԿՈՒ ինտեգրման տիպաբանություն՝ չափանիշներ.....	51
Աղյուսակ 6:	ՆՄԿՈՒ ինտեգրման տիպաբանություն՝ երկրներ.....	52

Գծապատկերներ

Գծապատկեր 1:	ՆՄԿՈՒ ուղիներ, ընդհանուր ներկայացում.....	15
Գծապատկեր 2:	Մասնակցությունն ընդհանուր և մասնագիտական կրթությանը ISCED 3-ում (ISCED 3-ում ընդհանուր մասնակցության %).....	26
Գծապատկեր 3:	Առաջընթացն ու անցումն ակադեմիական (ուսումնական) և մասնագիտական ուղիների միջև.....	30

Գծապատկեր 4: ISCED 5b-ում ներգրավված բոլոր ISCED 5 ուսանողների տոկոսային հարաբերակցություն.....	48
Գծապատկեր 5: ՆՄԿՈՒ ուղիներ և ընդհանուր կրթության համակարգ.....	53

1. Ծանոթագրություն

Եվրոպական Միության երիտասարդներից շատերի համար ակադեմիական ուսուցումն է, որ տանում է դեպի բարձրագույն կրթություն, որն էլ իր հերթին պարտադիր կրթությունից հետո դարձել է նախընտրելի ուղի: Սա թողնում է իր հետևանքները նախնական մասնագիտական կրթության և ուսուցման (ՆՄԿՈՒ) վրա այնքանով, որ մասնագիտական ուղին շատերի համար դարձել է «երկրորդ այլընտրանքային» տարբերակ: Հարկավ, կան բացառություններ, մասնավորապես Գերմանիայում և սկանդինավյան երկրներում, որտեղ մասնագիտական ուղին շարունակվում է դիտարկվել որպես զբաղվածության անցնելու բարձր կարգավիճակ: Բացի այդ, Եվրոպայում և Եվրոպական Միությունում (ԵՄ) ազգային տնտեսություններին մասնագիտական հմտությունների ապահոված արժեքը ճանաչելիս ՆՄԿՈՒ-ն դարձել է բարեփոխման ենթակա՝ կատարելագործելու իր գրավչությունը ապագա մասնակիցների համար:

Հիմնվելով ReferNet-ի ազգային թղթակիցների կողմից ապահովված տեղեկատվության վրա՝ սույն զեկույցն ամփոփում է 25 երկրի ՆՄԿՈՒ համակարգերի կառուցվածքը,

բովանդակությունը և բարեփոխումները՝ տրամադրելու նմանությունների, հակադրությունների ու միտումների վերանայումն ազգային մակարդակում: Ներառված երկրներն են.

Բելգիա	Իռլանդիա	Կիպրոս	Ավստրիա	Ֆինլանդիա
Չեխիայի	Հունաստան	Լատվիա	Լեհաստան	Շվեդիա
Հանրապետություն	Իսպանիա	Լիտվա	Պորտուգալիա	Միացյալ
Դանիա	Ֆրանսիա	Հունգարիա	Սլովակիա	Թագավորություն
Գերմանիա	Իտալիա	Նիդեռլանդներ	Սլովենիա	Իսլանդիա
Էստոնիա				Նորվեգիա

Ջեկույցը սկսվում է ՆՄԿՈՒ վերաբերյալ ԵՄ քաղաքականության ընդհանուր նկարագրով և շարունակվում է՝ ապահովելով մասնագիտական գործընթացների համեմատություն տարբեր մակարդակներում.

- (ա) ցածր միջնակարգ մակարդակ,
- (բ) ավագ միջնակարգ մակարդակ,
- (գ) աշկերտություն,
- (դ) հետմիջնակարգ ոչ բարձրագույն,
- (ե) բարձրագույն:

Ի հավելումն՝ ուսուցման հատուկ ծրագրերը, որոնք նպատակաուղղված են զբաղվածություն ստանալու համար առանցքային հմտություններ ձեռք բերող մտավոր դժվարություններ ունեցող երիտասարդներին, ևս ամփոփված են:

Նկատի են առնվել որոշ ընդգրկուն թեմաներ, հատկապես ազգային համակարգերի բարեփոխումը, այն չափը, որով ՆՄԿՈՒ ուսանողները շարունակում են ուսուցումը բարձր մակարդակներում և հարաբերական այն հեշտությունը, որով ուսանողները կարող են կատարել անցումներ դասընթացների միջև (ՆՄԿՈՒ համակարգի և՛ ներսում, և՛ դրանից դուրս): Մինչդեռ Եվրոպայում ազգային համակարգերը կրում են հանրային բնույթ, հատկապես բարեփոխումների ուղղությամբ, օրինակ՝ ՆՄԿՈՒ համապատասխանությունն աշխատաշուկայի առկա և հետագա պահանջներին երաշխավորելը, այնուամենայնիվ, կա էական տարբերություն բարեփոխման կառուցվածքի, բովանդակության և ընթացքի միջև, որն իր արտահայտությունն է գտնում ՆՄԿՈՒ ազգային արդի համակարգերի՝ միմյանցից տարբերվող ծագումնաբանություններում:

2. ՆՄԿՈՒ, Լիսաբոնի ռազմավարություն և քաղաքականության վերջին զարգացումներ

2.1. Լիսաբոնի ռազմավարություն և ՆՄԿՈՒ կարևորություն

Եվրոպան կարիք ունի՝ մեծացնելու հմտությունների պատրաստման չափը: Սա այն վերջնական եզրահանգումն է, որը բխում է Լիսաբոնի ռազմավարությունից և Եվրոպական Հանձնաժողովի քաղաքականության հետագա դրույթներից: Լիսաբոնի ռազմավարությունը նշում էր, որ Եվրոպան ունի հետևյալ նպատակը՝ «... դառնալ ամենամրցունակ և շարժունակ գիտելիքահենք տնտեսությունն աշխարհում՝ ընդունակ տնտեսական տևական աճի ավելի շատ ու ավելի լավ աշխատանքներով և սոցիալական մեծ համախմբվածությամբ» (ԵՄ Խորհուրդ, 2000թ.): Այս նպատակին պետք է հասնել մինչև 2010 թվականը:

Կայուն աճը կախված է նորարարության, հետազոտության մեջ ներդրումներից, իսկ զարգացումը՝ բարձր մակարդակի հմտությունների առաջարկից և կրթված այնպիսի մարդկանցից, ովքեր ունակ են զարգացնել նորարարական մտքեր: Կա նաև Լիսաբոնի ռազմավարության սոցիալական համախմբվածության կողմը: Եթե գործազրկության ցուցանիշները պետք է կրճատվեն, իսկ զբաղվածության ցուցանիշները մեծանան, ապա պետք է արձագանքել կրթությանն ու հմտություններին այլ մակարդակներում ևս, հատկապես այն անձանց շրջանում, ովքեր խոցելի են Եվրոպական տնտեսությունում տեղի ունեցող կառուցվածքային փոփոխությունների նկատմամբ: Քանի որ բարձրագույն կրթությունը կախված է կրթական համակարգի ավելի ցածր մակարդակների առաջարկից, դրա կատարողականությունը, թեկուզ մասամբ, բայց ապավինում է նախնական և միջնակարգ կրթության մակարդակների կատարելագործմանը:

Լիսաբոնի ռազմավարությունում սկզբնապես սահմանված նպատակներին հասնելու գործում ՆՄԿՈՒ դերակատարությունը կարելի է տեսնել ԵՄ կողմից մշակված թիրախներում.

- (ա) երկրները պետք է կրճատեն դպրոցը վաղ լքողների (18-24տ.) ցուցանիշը մինչև 10%,
- (բ) երիտասարդների (20-24տ.) նվազագույնը 85%-ը պետք է ավարտի առնվազն ավագ միջնակարգ կրթությունը,
- (գ) մեծահասակների (25-64տ.) առնվազն 12.5%-ը պետք է մասնակցի ցկյանս ուսումնառությանը:

«Մասշտաբների մեծացում 2010թ.-ին (Cedefop, Լիպինսկա, 2007)»-ը դուրս է բերում այն մարտահրավերները, որոնց պետք է արձագանքի ՄԿՈՒ համակարգը: Դրանք են՝

- (ա) ազգագրական փոփոխություն: Ելնելով բնակչության առկա կառուցվածքից՝ ավագ, հետմիջնակարգ և բարձրագույն կրթությունում սովորող երիտասարդների թվաքանակը մինչև 2030թ. կնվազի ավելի քան երկու միլիոնով,
- (բ) զբաղվածության փոփոխություն: Սա վերաբերում է հմտության ավելի բարձր մակարդակներ պահանջող աշխատանքներին,
- (գ) հմտության ցածր մակարդակներ ունեցող մարդկանց, չնայած նվազող, սակայն համեմատաբար մեծ թվաքանակի կրճատման խնդրի լուծում,
- (դ) հմտությունների առկա և հետագայում առաջացող պակասորդների կանխում:

2.2. Քաղաքականության վերջին զարգացումներ

Լիսաբոնի ռազմավարությանը համապատասխան կրթության քաղաքականությունը ԵՄ-ում նախագծվել է քաղաքականության երեք հիմնական դրույթներով.

- (ա) Կոպենհագենի հռչակագիր, 2002թ. (Եվրոպական Հանձնաժողով, 2002),
- (բ) Մասստրիխտի կոմյունիկե, 2004թ. (Եվրոպական Հանձնաժողով, 2004),
- (գ) Հելսինկիի կոմյունիկե, 2006թ. (Եվրոպական Հանձնաժողով, 2006ա):

Կոպենհագենի հռչակագիրը սահմանում էր մասնագիտական կրթության և ուսուցման (ՆՄԿՈՒ) եվրոպական ուղղվածությունը՝ ներառյալ որակավորումների ու կարողությունների ճանաչումը: Մասստրիխտի կոմյունիկեն հիմնվում էր Կոպենհագենի հռչակագրի վրա և սահմանում էր գործողության պլաններ ազգային մակարդակում՝ մեծացնելու համար ներդրումները ՄԿՈՒ-ում և ՄԿՈՒ համակարգերի ճկունությունը, որպեսզի վերջիններս ունակ լինեն արձագանքել գործատուների կարիքներին և օժանդակել աշխատաշուկայում տեղի ունեցող փոփոխությունների նկատմամբ ամենախոցելի անձանց: Հելսինկիի կոմյունիկեն ոչ միայն հաստատում էր Մասստրիխտի կոմյունիկեի նպատակները, այլ նաև ուշադրություն էր դարձնում ՆՄԿՈՒ՝ երիտասարդների ավելի գրավիչ ընտրություն անելու վրա: Իսկ ավելի կոնկրետ, Հելսինկիի կոմյունիկեն կատարում է անդրադարձ հետևյալի վրա.

- (ա) մարդկային կապիտալում և հմտությունների մեջ ներդրումները մեծացնելու կարիք,
- (բ) ճանաչում, որ ՄԿՈՒ-ն ցկյանս ուսումնառության գլխավոր մասն է կազմում,
- (գ) աշխատանքային կյանքին համապատասխան հմտությունների բազայի տրամադրման կարիք,
- (դ) ՄԿՈՒ օժանդակություն մրցունակությանն ու սոցիալական համախմբվածությանը,
- (ե) եվրոպական և ազգային քաղաքականությունների դերակատարությունը ՄԿՈՒ-ն բարելավելու մեջ,
- (զ) ՄԿՈՒ-ում և աշխատանքային կյանքում երիտասարդներին ներգրավելու մարտահրավեր:

Վերջին կետն իրենից ներկայացնում է մեծ կարևորություն՝ ելնելով Եվրոպայում երիտասարդների շրջանում ՆՄԿՈՒ հարաբերական գրավչությունից: Օրինակ՝ Գերմանիայում երիտասարդների երկու երրորդն ընդունվում է դուալ համակարգ, մինչդեռ ՄԹ-ում ակադեմիական ուղին ավելի գրավիչ է՝ համեմատած ՄԿՈՒ-ի հետ, որն ունի ավելի ցածր կարգավիճակ¹: Հելսինկիի կոմյունիկեում նշվում է. «Եվրոպական ՄԿՈՒ

¹ Օրինակ՝ ՄԹ-ում մասնագիտական որակավորումներից ստացված շահույթների ցուցանիշներն ավելի ցածր են, քան ակադեմիական որակավորումներինը (Լեյթշի՝ Հմտությունների վերանայում, 2006):

քաղաքականությունները պետք է օժանդակեն նախնական ՄԿՈՒ-ի բարձր որակին և ստեղծեն պայմաններ՝ կատարելագործելու շարունակական ՄԿՈՒ-ի միջոցով աշխատուժում գտնվող մարդկանց հմտությունները: Քաղաքականությունները պետք է ներգրավեն մասնագիտական ուսուցման և/կամ բարձրագույն կրթության բոլոր երիտասարդներին՝ միևնույն ժամանակ երաշխավորելով, որ նրանք ձեռք են բերում աշխատաշուկային և նրանց հետագա կյանքին համապատասխան հմտություններ ու կարողություններ» (Եվրոպական Հանձնաժողով, 2006ա, էջ 3):

Որպեսզի ՆՄԿՈՒ-ում ներդրումները մեծանան, եվրոպական մակարդակում քաղաքականությունը նույնպես ձգտել է կատարելագործել ՄԿՈՒ կառուցվածքն ու բովանդակությունը հետևյալի միջոցով.

- (ա) ՄԿՈՒ համակարգերի ավելի մեծ թափանցիկության ապահովում,
- (բ) որակավորումների եվրոպական շրջանակի մշակում՝ հիմնվելով ՄԿՈՒ կարողություններին միտված արդյունքների վրա, ինչպես նաև որակավորումների ազգային շրջանակների մշակում՝ ավելի հեշտ համեմատելու որակավորումները Եվրոպայում,
- (գ) ոչ ֆորմալ ուսումնառության ճանաչման համընկնում,
- (դ) ՄԿՈՒ համակարգերի որակի ապահովման ընդհանուր ընկալման խրախուսում, հատկապես այն հատվածներում, որտեղ համակարգերն ազգային մակարդակում դառնում են ավելի քիչ կենտրոնացած,
- (ե) երիտասարդների ուղղորդման կարևորության շեշտադրում և՛ ՄԿՈՒ-ում, և՛ ցկյանս ուսումնառությունում:

Եվրոպական չափորոշիչների և սահմանումների իրագործումը եղել է փոփոխական, չնայած այն հանգամանքին, որ բոլոր երկրները շարժվում են ընդհանուր ուղղությամբ (Cedefop, Լիպինսկա, 2007): ՆՄԿՈՒ համակարգերը, կառուցվածքային, բովանդակային և արդյունքների ընդհանրությունները բացահայտելիս, բացահայտում են նաև էական տարբերություններ միմյանց կամ ՆՄԿՈՒ վերաբերյալ ընդհանուր մոտեցում ունեցող երկրների խմբերի միջև: Նույնիսկ երկրների ներսում կարող են լինել տարբեր մոտեցումներ տարածաշրջանային կամ տեղական մակարդակում: Եվրոպական և ազգային քաղաքականությունների նպատակն է տրամադրել ընդհանուր շրջանակ, որը կապահովի իրականացման ու արդյունքների որակի երաշխիքներ, ինչպես նաև հիմք համեմատականության համար: Հաջորդ բաժինը դիտարկում է, թե ինչպես են ՆՄԿՈՒ համակարգերը և դրա տարբեր մակարդակները զարգացել վերջին ժամանակահատվածում:

3. ՆՄԿՈՒ գարգացում

Հենվելով 25 երկրի ՆՄԿՈՒ՝ ReferNet-ի կողմից տրամադրված մանրամասն վերլուծությունների վրա՝ սույն զեկույցը տրամադրում է ՆՄԿՈՒ-ին առնչվող հիմնական միտումների ամփոփումը.

- (ա) բարեփոխում,
- (բ) սահմանում,
- (գ) կառուցվածք,
- (դ) մասնակցություն,
- (ե) բովանդակություն
- (զ) համատեղելիություն եվրոպական չափորոշիչների հետ:

3.1. ՆՄԿՈՒ բարեփոխում

ՆՄԿՈՒ-ն շատ երկրներում սովորաբար հետ է գնում դեպի միջնադարյան գիլդիաներ, սակայն իր ներկայիս ձևաչափում այն կարելի է կրկին հարմարեցնել արդյունաբերական հեղափոխության կարիքներին: ՆՄԿՈՒ-ն նաև շարժընթացային (դինամիկ) հասկացություն է, որը ենթարկվել է բազմաթիվ բարեփոխումների նախքան այն կհարմարվի աշխատաշուկայի կանխորոշված առկա կարիքներին: Բոլոր երկրներում ՆՄԿՈՒ կառուցվածքն ու բովանդակությունը եղել են հիմնական բարեփոխումների առարկա վերջին տարիներին: Բարեփոխումները կրել են արմատական բնույթ արևելյան դաշնային երկրներում, որտեղ ՆՄԿՈՒ համակարգը պետք է ոչ միայն հարմարեցվի շուկայական տնտեսությունների զարգացմանը, այլ նաև պետք է ավելի շուտ արձագանքի աշխատաշուկայի առկա և հետագա պահանջներին, որն ընդհանուր միտում է Եվրոպայում: Բարեփոխման շուրջ ծավալված բանավեճը ՆՄԿՈՒ-ն ավելի ձկուն դարձնելու մասին է, որպեսզի այն ավելի լավ կարողանա բավարարել հմտությունների պահանջարկը:

3.2. ՆՄԿՈՒ սահմանում

ՆՄԿՈՒ ընդհանուր սահմանումը հմտություններով և/կամ կարողություններով մարդկանց պատրաստումն է, ովքեր կկարողանան ունենալ որոշակի զբաղվածություն կամ մուտք գործել որոշակի ոլորտ: Սա այն առնվազն սահմանումն է, որը տեղին է շատ դեպքերի համար, սակայն ՆՄԿՈՒ-ն զարգացող հասկացություն է բոլոր պետություններում, և շատ հաճախ այս սահմանափակ սահմանումը դառնում է հնացած: ՆՄԿՈՒ-ն այլևս չի դիտարկվում որպես միայն մասնագիտական ուղի, այլ ակադեմիական ուղու այլընտրանքային կողմ, որը պարունակում է ակադեմիական կրթության բազմաթիվ

տարրեր, որոնք ի վերջո տանում են բարձրագույն մակարդակ՝ համալսարանական կրթություն: Սա ՆՄԿՈՒ մեծ ձգտումն է:

Այն երկրներում, որտեղ դուալ համակարգը լավ հաստատված է (Գերմանիա), մասնագիտական ուղին միշտ միավորել է աշխատավայրի գործնական փորձառությունը դասասենյակում ձեռք բերվող ակադեմիական ուսուցման հետ: Անկասկած, անցումը մասնագիտական և ակադեմիական ուղիների միջև ավելի քիչ խնդրահարույց է՝ ՆՄԿՈՒ-ում ակադեմիական ուժեղ բաղադրիչի առկայության պատճառով: Ուրիշ տեղերում այս ուղիների միջև անցումը և կրթության համակարգի բարձրագույն մակարդակում շարունակելու հնարավորությունն ավելի խնդրահարույց է՝ մասնագիտականից ակադեմիական ուսուցում անցում կատարելու հարաբերական դժվարության պատճառով (ավելի հեշտ է անցումը հակառակ ուղղությամբ):

3.3. ՆՄԿՈՒ կառուցվածք

Ընդհանուր առմամբ ՆՄԿՈՒ-ն սկսվում է ավագ միջնակարգ մակարդակում, բայց կրթության համակարգում կան շատ ուղիներ ՆՄԿՈՒ մուտք գործելու համար (Գծապատկեր 1): Մինչև վերջերս ՆՄԿՈՒ-ն ավագ միջնակարգ մակարդակի երևույթ էր, սակայն աստիճանաբար այն տեղափոխվում է երրորդ մակարդակ և առկա է նաև ցածր միջնակարգ մակարդակում: Ցածր միջնակարգ դպրոցում, որտեղ ՆՄԿՈՒ-ն գոյություն ունի, այն ապահովում է ընդհանուր մասնագիտական պատրաստվածություն ընդհանուր, ակադեմիական դասընթացների հետ միաժամանակ: Ուստի, որոշ անհատների համար ուղին սկսվում է 14 տարեկան հասակում պարտադիր կրթության համակարգում և ձգվում է մինչև 25 տարեկան:

Ընդհանրապես տարբերակվում են հետևյալ ուղիները՝

- (ա) ակադեմիական,
- (բ) մասնագիտական (հանրակրթության մակարդակով),
- (գ) աշկերտություն,
- (դ) հատուկ ծրագրեր (գլխավորապես նպատակուղղված են սոցիալական բացառման վտանգ ներկայացնող մարդկանց):

Մասնագիտական ուղղությունը, ինչպես ներկայացված է գծապատկեր 1-ում, հիմնված է պարտադիր հանրակրթական համակարգի վրա, որին հետևում է կամ մասնագիտական կրթությունը դպրոցներում, կամ աշկերտության համակարգը: Բելգիան, Չեխիայի Հանրապետությունը, Ղանիան, Գերմանիան, Իռլանդիան, Ֆրանսիան, Հունգարիան, Ավստրիան, Լեհաստանը, Պորտուգալիան, Սլովենիան և ՄԹ-ն ապահովում են

մասնագիտական դասընթացներից կամ աշկերտությունից տարբեր հատուկ ծրագրեր, որոնք նպատակաուղղված են ՆՄԿՈՒ համակարգից դուրս մնալու և գործազուրկ կամ պասիվ դառնալու վտանգ ներկայացնող երիտասարդներին: Ընդհանրապես այս սխեմաների նպատակն է կատարելագործել երիտասարդների աշխատունակության հմտությունները՝ նրանց ապահովելով բազային հմտություններ, որոնք անհրաժեշտ են աշխատաշուկայում գործունեություն ծավալելու համար:

Գծապատկեր 1-ում ներկայացված մասնագիտական կրթության համապատասխան ավագ միջնակարգ պարբերաշրջանի ավարտելուն պես ստեղծվում է հետմիջնակարգ ոչ բարձրագույն կրթության կամ բարձրագույն կրթության գնահատման հնարավորություն: Գործնականում, հետմիջնակարգ, ոչ բարձրագույն և բարձրագույն կրթությունների սահմանումը փոքր-ինչ աղոտ է (Cedefop, Լիպինսկա, 2007):


Եթե կարելի է որոշարկել մի քանի գործոններ, որոնք բնութագրում են ՆՄԿՈՒ զարգացումը՝ համաձայն ընդհանուր հետազոծի, ապա գործնականում, համակարգերը սկսվում են միմյանցից խիստ տարբեր կարգավիճակներով՝ ըստ կառուցվածքի, ուսումնական ծրագրերի, որակավորման/լիցենզավորման, փոխանցման և առաջընթացի: Ինչպես կքննարկվի այսուհետ, փոխանցումն ու առաջընթացը դարձել են գերակշռող թեմաներ ՆՄԿՈՒ համակարգերի զարգացման ընթացքում: Փոխանցումը վերաբերում է համակարգերի այն հնարավորությանը, որը թույլ է տալիս մարդկանց տեղափոխվել ակադեմիական և մասնագիտական ուղղությունների, ինչպես նաև մասնագիտական ուղու տարբեր ձևաչափերի միջև: Առաջընթացը վերաբերում է համակարգերի այն հնարավորությանը, որը թույլ է տալիս մարդկանց ձեռք բերել կրթության բարձրագույն մակարդակները՝ անկախ այն բանից, թե նրանք ընտրել են ակադեմիական, թե՞ մասնագիտական ուղին: Ուստի և, քննարկումը ծավալվում է կրթության համակարգի հնարավոր տարբեր եղանակների շուրջ:

3.4. ՆՄԿՈՒ մասնակցություն

Ի սկզբանե ՆՄԿՈՒ-ն նախագծվել է՝ ավագ միջնակարգ մակարդակի վերջում կրթության համակարգն ավարտող մարդկանց աշխատաշուկա մուտք գործելու հնարավորություն տալու համար: Քաղաքականություն մշակողներն այժմ աստիճանաբար փորձում են գտնել, թե ինչպես կարող է ՆՄԿՈՒ-ն ուղղորդել դասընթացների շարունակականությունը դեպի հետմիջնակարգ և բարձրագույն մակարդակներ: Եվրոպական Հանձնաժողովը բարձրագույն մակարդակում որոշարկել է ամրապնդող կապեր ուսումնական հաստատությունների ու աշխատաշուկայի միջև՝ որպես առանցքային մարտահրավեր, և սատարում է գործակցությանը բոլոր մակարդակներում՝ ներառյալ համալսարանները (Եվրոպական

Հանձնաժողով, 2006թ): Ներկայումս շարժ կա՝ զարգացնելու բարձրագույն մակարդակի հետագա աշկերտություններ: Ընդհանրապես, մտահոգություն կա, որ անցումը մասնագիտականից բարձրագույն մակարդակի կրթություն սահմանափակ է, հատկապես բակալավրի աստիճան տվող համալսարանական կրթությունը: Սա կապված է ՆՄԿՈՒ մասնակցությունը մեծացնելու հետ, քանի որ առաջընթացի սահմանափակ հնարավորությունները կարող են հուսախաբ անել երիտասարդներին՝ ստանալու մասնագիտական կրթություն:

Գծապատկեր 1: ՆՄԿՈՒ ուղիներ, ընդհանուր ներկայացում



Նշումներ:

1. Գծապատկերը ցույց է տալիս Եվրոպայում մասնագիտական կրթության իրականացման կառուցվածքը: Այն ցույց է տալիս անցումներն ու առաջխաղացումները, որոնք տեսականորեն հնարավոր են ՆՄԿՈՒ համակարգում նույնիսկ այն դեպքում, երբ գործնականում որոշ անցումներ տեղի չեն ունենում: Օրինակ՝ անցումն աշկերտությունից ակադեմիական ուղի ավագ միջնակարգ դպրոցում տեղի չի ունենում՝ չնայած այն հանգամանքին, որ ազգային համակարգերը թույլ են տալիս այդպիսի անցում: Հաճախ լինում են էական այնպիսի խոչընդոտներ, ինչպիսիք են ուղիների միջև կրեդիտների ճանաչումն ու փոխանցելիությունը, որոնք կանխում են շարժումը մի ուղուց մյուսին:
2. Մասնագիտական ուսուցումն ասպիրանտուրայում ևս հնարավոր է, սակայն այստեղ հարց է ծագում, թե արդյո՞ք այն բաղկացած է ՆՄԿՈՒ-ից, թե՞ շարունակական մասնագիտական կրթությունից և ուսուցումից: Ուստի և, խորն անդրադարձ չի կատարվել դրան զեկույցում կամ վերոնշյալ գծապատկերում:

3.5. ՆՄԿՈՒ բովանդակություն

Պետությունն ունենում է մեկ ընդհանուր պատկեր կամ ազգային, կամ տարածաշրջանային մակարդակներում՝ հաստատելով մի շրջանակ, որտեղ ավագ միջնակարգ մակարդակում կամ աշկերտությունում ուսումնական հաստատությունները կարող են նախագծել ուսումնական ծրագրեր: Սովորաբար գործում է եռակողմ համակարգը, որը ներգրավում է պետությանը, ուսումնական հաստատություններին և արդյունաբերող/պրոֆեսիոնալ մարմիններին (կանոնակարգելով տվյալ մասնագիտությունը կամ ծավալելով խորհրդակցություն դրա շուրջ): Գործընթացում ներգրավված սոցիալական գործընկերության չափը կախված է տնտեսությունում սոցիալական գործընկերության ընդհանուր չափաքանակից: Այն ավելի զարգացած է արևմտյան, քան արևելյան եվրոպական ՆՄԿՈՒ համակարգերում:

Գնահատման գործընթացը, հիմնված ուսումնասիրության, գործնական ցուցադրությունների վրա, և/կամ նախագծի աշխատանքի գնահատումը կազմակերպվում են նույն եղանակով: Պետությունը հաստատում է ընդհանուր շրջանակ, որի ներսում ուսումնական հաստատությունները և արդյունաբերող/պրոֆեսիոնալ կազմակերպությունները սահմանում են չափորոշիչներ՝ չափաբերելու երիտասարդների կատարողականությունը: Ղանիան, Իռլանդիան, Ֆրանսիան, Իտալիան, Նիդեռլանդները և Ֆինլանդիան Cedefop-ի կողմից դիտարկվում են որպես երկրներ, որոնք ունեն որակի ապահովման արդյունավետ մեխանիզմներ (Cedefop, Սիֆրայդ, 2007):

3.6. Եվրոպական չափորոշիչներ

Մասնագիտական ու ակադեմիական ուղղությունների միջև անցումային մեծ ծավալ և առաջընթացի հնարավորություններ ապահովելու համար հարկավոր է համեմատականություն և փոխանցում մասնագիտական ու ընդհանուր, ակադեմիական որակավորումների միջև: Որակավորումների եվրոպական շրջանակը և որակավորումների ազգային շրջանակները թույլ կտան, որպեսզի վերոնշյալը տեղի ունենա ապագայում: Սույն ուսումնասիրությունում վերանայված 25 երկրից երեքն արդեն ընդունել են որակավորումների ազգային շրջանակներ (Իռլանդիա, Ֆրանսիա և ՄԹ), իսկ մնացյալը, բացի Կիպրոսից, որը դեռևս մնում է թերահավատ, մտադրված են ներմուծել այդպիսի համակարգ մոտ ապագայում:

4. ՆՄԿՈՒ վերջին բարեփոխումներ և զարգացում

ՆՄԿՈՒ համակարգերը Եվրոպայում առաջացել են արդյունաբերական հեղափոխության հետևանքով: Այդ հեղափոխության պատճառը հանդիսացան մի քանի առանցքային իրադարձություններ`

- (ա) Համաշխարհային II պատերազմ,
- (բ) Խորհրդային Միության փլուզում,
- (գ) Կառուցվածքային փոփոխություն եվրոպական տնտեսությունում:

Համաշխարհային II պատերազմը ստեղծեց մեծ պահանջարկ տեխնիկական աշխատանքի համար` որպես ռազմամթերքի պահանջարկի հետևանք, իսկ ավելի ուշ` վերակառուցման համար, որի արդյունքը դարձավ ՆՄԿՈՒ համակարգերի վերանախագծումը:

Խորհրդային Միության դաշնային երկրներն արևելյան Եվրոպայում կախված էին կենտրոնացված եղանակով պլանավորված համակարգից, որը սահմանում էր մի քանի մարդու, ովքեր պետք է ուսուցանվեին: Բալթյան պետություններն այս երևույթի վառ օրինակներ են ներկայացնում: Նրանք ստիպված են եղել ստեղծել ՆՄԿՈՒ համակարգեր, որոնք կարող են բավարարել շուկայական տնտեսության պահանջները միևնույն ժամանակ, երբ կառուցվածքային հիմնական փոփոխությունները ուղղորդվել են նրանց

տնտեսություններում ձեռքի հմտությունների պահանջարկի անկումով, որոնց միտված էին նախկին ՆՄԿՈՒ համակարգերը: Ցկյանս ուսումնառության կարևորությունը ևս մեծացել է:

Եվրոպայում բոլոր պետություններն ընդունել են ավելի բաց Եվրոպայի և համաշխարհային շուկայի պայմաններն ու կառուցվածքային փոփոխությունները: Հիմնական փոփոխություններն են՝

- (ա) համակարգերի ավելի արագ արձագանքում աշխատաշուկայի պահանջներին (հիմնվելով սոցիալական գործընկերների ներգրավման և հմտության պահանջարկի կանխորոշման միջոցների կատարելագործման վրա),
- (բ) ավելի ճկուն ՆՄԿՈՒ համակարգ, որը հակված չէ անհատներին սահմանափակել մասնագիտական պատրաստվածության նեղ ուղով,
- (գ) շեշտադրում հմտության զարգացման բարձրագույն մակարդակների և հետմիջնակարգ (ոչ բարձրագույն) ու բարձրագույն ՆՄԿՈՒ-ի վրա:

Բոլոր համակարգերը դեռևս իրականացնում են բարեփոխում՝ որպես շարունակական զարգացման գործընթացի մի մաս.

- (ա) մասնագիտական կրթության և աշխատանքի միջև կապերի բարելավում (աշխատունակության կատարելագործում),
- (բ) որակավորումների համակարգի և լիցենզավորման նոր միջոցների թարմացում,
- (գ) մասնակցության մակարդակների բարձրացում,
- (դ) տարբեր ուղիների միջև ավելի լավ կապերի ստեղծում:

Բացի խորհրդային դաշնային երկրների և անդամ հին պետությունների միջև տարբերությունից, կա նաև տարբերություն այն երկրների միջև, որոնք ապահովում են՝

- (ա) համեմատաբար համասեռ կառուցվածք՝ համակարգի համեմատաբար քիչ ուղիներով,
- (բ) համեմատաբար տարասեռ կառուցվածք՝ բազմաթիվ ուղիներով:

Օրինակ՝ հսկայական տարբերություն կա ֆրանսիական համակարգի ու ձեռք բերվելիք բազմաթիվ մասնագիտական որակավորումների/չափորոշիչների և, ասենք, Ֆինլանդիայի միջև, որտեղ առաջընթաց է գրանցվել մասնագիտական որակավորումների/դասընթացների թվաքանակն ըստ առաջարկի համախմբելու գործում: Այնուամենայնիվ, դեռևս կան մի քանի

ընդհանուր բնորոշ գծեր ՆՄԿՈՒ ազգային համակարգերը զարգացնելու համար: Բոլոր երկրներում քաղաքականություն մշակողները, չնայած տարբեր աստիճաններով, սակայն պայքարում են մի քանի ընդհանուր հիմնախնդիրների դեմ.

- (ա) շատ երկրներում տեղի է ունեցել բարձրագույն կրթության ծավալների ընդլայնում՝ հանգեցնելով այն արդյունքին, որ ակադեմիական ուղին ուսանողների կողմից արժանանում է նախապատվության, որովհետև դրանով ավելի արագ է տեղի ունենում մուտքը բարձրագույն կրթություն,
- (բ) ազգային կրթության համակարգերում այս միտումը փոխելուն ուղղված ջանքերի համար քաղաքականության գլխավոր նպատակներից մեկն է դառնում ակադեմիական և մասնագիտական ուղիների միջև անցումի հեշտացումը (հատկապես այն դեպքերում, երբ մասնագիտականը դիտարկվում է որպես ցածր կարգավիճակ ունեցող ուղի),
- (գ) կան նաև ուսումնական ծրագրերի և որակավորումների վրա անդրադարձող հետևանքներ.
 - (i) ուսումնական ծրագիրը պետք է ստեղծի հիմքեր՝ թույլ տալու մարդկանց անցում կատարել ակադեմիական և մասնագիտական ուղիների միջև, մեկուսի ձեռք բերված կարողությունները պետք է փոխանցելի լինեն մյուսին,
 - (ii) որակավորումների համակարգը պետք է թույլ տա համեմատականություն, ինչպես օրինակ՝ աշկերտների վկայագրումը համեմատելի լինի մասնագիտական կամ ակադեմիական այլ ուղիների պարզևատրումների հետ,
 - (iii) ուսումնական ծրագիրը նաև պետք է անհատին ապահովի հետագա աշխատունակությամբ՝ կանխորոշելով հմտության կարիքները միջնաժամկետ և երկարաժամկետ ձևաչափերում (ուստի և, որոշ երկրներում սոցիալական գործընկերների և ոլորտային փորձագետների ներգրավում ուսումնական ծրագրերի նախագծման աշխատանքում):
- (դ) ուսուցում իրականացնողներին ավելի մեծ ինքնավարության ապահովում՝ սահմանելու ուսումնական ծրագրերն այնպես, որ նրանց բովանդակությունն ավելի լավ բավարարի պահանջին,
- (ե) քաղաքականությունը ձգտում է ուսումնառությունը դարձնել ավելի ձկուն մի քանի միջոցներով՝ ներառյալ ուսումնական պլանների անհատականացումը (Դանիա), շեշտը դնելով կարողությունների ձևավորմանը միտված ուսուցման վրա (Նիդեռլանդներ) և շարժումը դեպի մոդուլականացում (Ավստրիա) (Լենի, 2004ա և բ),
- (զ) մեծ ջանքեր են գործադրվել, որոնց նպատակն է խթանել մասնագիտական ուղին հետևյալի միջոցով՝

- (i) սոցիալական գործընկերների կողմից կազմակերպված քարոզարշավներ, որոնք ի ցույց կդնեն անհատի համար մասնագիտական հմտություններ ձեռք բերելու տնտեսական առավելությունները, շահեկանությունը (ՄԹ),
- (ii) անհատներին և գործատուներին ֆինանսական խթանիչների ապահովում՝ ներգրավելու մասնագիտական ուսուցման մեջ (Ավստրիա և Ֆրանսիա):

Վերոնշյալից մենք կարող ենք տեսնել, որ ՆՄԿՈՒ համակարգերի՝ աշխատաշուկայի և անհատի կարիքներին բավարարելու հնարավորությունը երաշխավորելու համար պահանջվող փոփոխությունը ոչ միայն էական է, այլ նաև ունի բազմաթիվ ասպեկտներ. մի քանի ասպեկտների պետք է արձագանքել զուգահեռաբար:

Սույն թեմաները հետագայում ուսումնասիրելիս քննարկումը կժամայվի այն զարգացումների շուրջ, որոնց նպատակն է խթանել անցումը դեպի աշխատանք՝ նկատի առնելով.

- (ա) միջնակարգ մակարդակի կրթություն,
- (բ) աշկերտության համակարգ,
- (գ) հատուկ ծրագրեր՝ օժանդակելու երիտասարդներին,
- (դ) հետմիջնակարգ, ոչ բարձրագույն կրթություն,
- (ե) բարձրագույն կրթություն:

Սրանցից յուրաքանչյուրն իր հերթին նկատի է առնվում այժմ:

5. ՆՄԿՈՒ-ն ցածր միջնակարգ մակարդակում

Շատ անհատների կարծիքով ՆՄԿՈՒ-ն, ընդհանուր առմամբ, փորձ է, որը ձեռք է բերվում ավագ միջնակարգ մակարդակում, սակայն վերոհիշյալ երկրներում ՆՄԿՈՒ-ն ցածր միջնակարգ մակարդակում ևս հասանելի մի տարբերակ է: Ցածր միջնակարգ մակարդակում երկրները կարելի է դասակարգել ըստ նրա, թե արդյո՞ք վերջիններս՝

- (ա) առաջարկում են ուսուցման առանձնահատուկ, առանձին դասընթաց,
- (բ) ապահովում են մասնագիտական կրթություն՝ որպես ընդհանուր կրթության լիարժեքորեն ինտեգրված մաս,
- (գ) չեն ապահովում ՆՄԿՈՒ:

Աղյուսակ 1: Երկրների դասակարգումն ըստ ցածր միջնակարգ մակարդակում ՆՄԿՌԻ իրականացման

Ցածր միջնակարգ մակարդակում առկա է ուսուցման առանձին դասընթաց	Աշխատանքային փորձից տարբերվող մասնագիտական պարապմունքները ներառված են ընդհանուր կրթության մեջ	ՆՄԿՌԻ չի իրականացվում	
Իսպանիա	Բելգիա	Ղանիա	Սլովենիա
Լատվիա	Չեխիայի Հանրապետություն	Էստոնիա	Շվեդիա
Լիտվա	Գերմանիա	Իռլանդիա	Իսլանդիա
Հունգարիա (միայն արվեստի դպրոցները)	Ավստրիա	Հունաստան	Նորվեգիա
Նիդեռլանդներ	Միացյալ Թագավորություն	Ֆրանսիա	
Լեհաստան		Կիպրոս	
Պորտուգալիա		Իտալիա	
Սլովակիա		Ֆինլանդիա	

Բացի Բելգիայից, Չեխիայի Հանրապետությունից, Նիդեռլանդներից, Հունգարիայում իրականացվող արվեստի դասընթացներից և Սլովակիայում տրամադրվող ուսուցման՝ պարի կոնսերվատորիայի դասընթացից, ցածր միջնակարգ մակարդակում առաջարկվող ՆՄԿՌԻ-ն հստակ նպատակաուղղված է դպրոցը վաղ լքելու հավանականություն ունեցող երիտասարդներին և նրանց, ովքեր ունեն դժվարություններ՝ ավարտելու պարտադիր կրթությունը (համապատասխանաբար կան կապեր 8-րդ հատվածում քննարկված հատուկ ծրագրերի հետ): Նպատակն է՝ օգնել երիտասարդներին մուտք գործել աշխատաշուկա թեկուզ և որակավորումների ցածր մակարդակով:

Որոշ երկրներ ներառում են մասնագիտական ուղղվածությունն ընդհանուր կրթության մեջ ցածր միջնակարգ մակարդակում: Նպատակն այստեղ ավելի շատ նախամասնագիտական ուսուցում կամ ուղղորդում առաջարկելն է՝ օժանդակելու աշակերտներին կատարել տեղեկացված ընտրություն հետագա դասընթացների համար, քան աշխատաշուկա մուտք գործելու համար նրանց որակավորումներով ապահովելը: Օրինակ՝ ՄԹ-ում աշակերտները կարող են ընտրել մասնագիտական առարկաներն ազգային ուսումնական ծրագրերում նախատեսված առանցքային առարկաների հետ զուգահեռ:

6. ՆՄԿՈՒ-ն ավագ միջնակարգ մակարդակում

6.1. Իրականացման կառուցվածքը

Ինչպես ցույց է տրված աղյուսակ 1-ում, ՆՄԿՈՒ-ն ավագ միջնակարգ մակարդակում ունի երեք տարբեր ուղղություն.

- (ա) իրականացվում է հանրակրթությունում կամ արհեստագործական ուսումնարաններում,
- (բ) աշկերտություն/աշխատանքի վրա հիմնված ուսումնառություն,
- (գ) հատուկ ծրագրեր:

Սույն հատվածը դիտարկում է (ա) կետի դերակատարությունը, մի ուղղություն, որը վերջին տարիներին աստիճանաբար զարգացել է որպես միջոց, որը երտասարդներին թույլ է տալիս ձեռք բերել ոչ միայն աշխատաշուկային համապատասխան, այլև բարձրագույն մակարդակում առաջընթաց ունենալու կրթություն:

Նորվեգիայում կրթության վերոնշյալ երեք ձևաչափերն առաջարկվում են միևնույն հաստատությունների կողմից և ունեն նույն կարգավիճակը, սակայն այս դեպքը չի վերաբերում շատ երկրներին, որտեղ ընդհանուր (ակադեմիական) կրթությունն իրականացվում է առանձին: Որոշ երկրներ տարբերակում են ՆՄԿՈՒ արհեստագործական ուսումնարանների տարբեր տեսակների միջև: Սլովակիան առաջարկում է ուսուցման ճյուղ և վերապատրաստման ճյուղ, իսկ Պորտուգալիան իրականացնում է և՛ միջնակարգ կրթության տեխնոլոգիական դասընթացներ, և՛ մասնագիտական դասընթացներ:

Ընդհանրապես, աճում է ակադեմիական կրթությունն ավագ միջնակարգ մակարդակում ՆՄԿՈՒ-ի տրամադրած մասնագիտական ուսուցմանը միավորելու միտումը: Սա ակնհայտ է դառնում հատկապես սկանդինավյան երկրների և Գերմանիայի՝ աշկերտության վրա հիմնված համակարգերում (7-րդ հատված): Օրինակ՝ Նորվեգիայի ավագ միջնակարգ ՄԿՈՒ-ն ներառում է երկու տարի աշկերտական ուսուցում, Ֆինլանդիայում աշխատանքի վրա հիմնված ուսուցումը տևում է դասընթացի առնվազն մեկ վեցերորդը, իսկ Իսլանդիայում ՆՄԿՈՒ-ն գլխավորապես հիմնված է աշկերտության վրա: Գերմանիայում երիտասարդների երկու երրորդն ընդունվում է «դուալ համակարգ», որը միավորում է ձեռնարկություններում մասնագիտական ուսուցումը արհեստագործական ուսումնարանների խիստ ընդհանուր/տեսական կրթության հետ: Գերմանիայում կան նաև ամբողջական ժամաքանակով մասնագիտական ուղղվածություններ:

6.2. Մուտքի հնարավորության պահանջներ և մասնակցություն

Մուտքի հնարավորության համար գլխավոր պահանջը ցածր միջնակարգ կրթությունը բարեհաջող ավարտելն է՝ ձեռք բերելով համապատասխան որակավորումներ և հասնելով որոշակի տարիքի (ընդհանրապես 15/16 տարեկան): Ավագ միջնակարգ ՆՄԿՈՒ մուտքի հնարավորության իրավունքը կարելի է ստանալ մինչև որոշակի տարիք: Օրինակ՝ Շվեդիայում 20 տարեկան երիտասարդները պետք է հավակնեն մեծահասակների կրթության համար, իսկ ՄԹ-ում 24 տարեկան անձանց համար կան ֆինանսավորման տարբեր ուղղություններ:

Արհեստագործական ուսումնարանները սովորաբար ազատ են իրենց ընտրության սեփական չափանիշների կիրառման մեջ, հատկապես, երբ տեղերի համար պահանջարկը գերազանցում է առաջարկին, և, հետևաբար, մեծանում է ընդունելության քննությունների կարևորությունը (Իսպանիա և Հունգարիա): Բացի ուսուցման բավարար տեղերի պակասից, աշխարհագրական սահմանափակումները ևս կարող են խոչընդոտել ուսանողներին մուտք գործել իրենց ընտրած դասընթացը: Գերմանիայում մուտքի հնարավորությունը սահմանվում է ըստ ուսուցման նպատակի, այսինքն՝ այն տանում է դեպի մասնագիտական կրթություն², թե՞ մուտք դեպի բարձրագույն կրթություն:

Բոլոր երկրներում նպատակն է՝ երիտասարդներին պահել կրթության և ուսուցման համակարգում ցածր միջնակարգ պարբերաշրջանն ավարտելիս, ուստի, կա նաև շրջահայեցության որոշակի աստիճան, որը թույլ է տալիս մարդկանց շարունակել իրենց դասընթացները՝ անկախ իրենց ձեռք բերած ցածր միջնակարգ մակարդակից: Օրինակ՝ կրթություն իրականացնողները կարող են ընդունել ուսանողների՝ հիմնվելով նրանց ձեռք բերած կարողությունների վրա:

Գծապատկեր 2-ը տրամադրում է երկրներում մասնակցության մակարդակների ցուցում: Այն ապահովում է տեղեկատվություն ISCED մակարդակ 3-ի մասնագիտական կրթության համար (միջնակարգ կրթության ավարտական փուլ): Դիտարկելով ISCED 3-ի մասնագիտական կրթության մեջ ներգրավված ուսանողների տոկոսային հարաբերությունը՝ որպես ISCED 3-ում ընդհանուր մասնակցության տոկոսային հարաբերություն, ակնհայտ է

դառնում է, որ նկատելի է էական տարբերություն երկրների միջև: Սրա մի մասը վիճակագրական անոմալիաների հետևանք է, ինչպես Իռլանդիայի դեպքում²:

Ընդհանուր պատկերն իրենից ներկայացնում է այս մակարդակում մասնագիտական և ընդհանուր կրթության միջև միմյանցից տարբեր խառնուրդներ: Մի քանի խմբավորումներ, սակայն, հստակ են.

- (ա) մասնագիտական կրթությանը մասնակցության ցածր մակարդակներ (30%-ից քիչ մասնակցություն ISCED 3-ի մասնագիտական կրթությանը)՝ Էստոնիա, Իտալիա, Կիպրոս, Լիտվա, Հունգարիա և Պորտուգալիա,
- (բ) միջին մասնակցություն մասնագիտական կրթությանը (30-60%-ի միջև մասնակցություն ISCED 3-ի մասնագիտական կրթությանը)՝ Բուլղարիա, Դանիա, Ֆինլանդիա, Ֆրանսիա, Հունաստան, Իսլանդիա, Լատվիա, Մալթա. Լեհաստան, Իսպանիա և Շվեդիա,
- (գ) մասնակցության համեմատաբար բարձր մակարդակներ (ավելի քան 60% մասնակցություն ISCED 3-ի մասնագիտական կրթությանը)՝ Բելգիա, Չեխիայի Հանրապետություն, Գերմանիա, Լիտվա, Լյուքսեմբուրգ, Նիդեռլանդներ, Ավստրիա, Ռումինիա, Սլովենիա, Սլովակիա և ՄԹ, ինչպես նաև Նորվեգիա և Շվեյցարիա:

Եվրոպայում նկատելի է բարձրագույն կրթությանը մասնակցության մեծացող ցուցանիշի ընդհանուր միտում (Եվրոպական Հանձնաժողով, 2007): Եթե ՆՄԿՈՒ-ն բարձրագույն կրթություն մուտք գործելու հնարավորություն չի տալիս, և բոլոր երկրներում անցումը ՆՄԿՈՒ-ից բարձրագույն կրթություն տեղի է ունենում ավելի քիչ, քան ուղղակիորեն, ապա արդյունքում երտասարդները կարող են հետ կանգնել մասնագիտական ուղին ընտրելու մտադրությունից: Հետևաբար, ձեռք են առնվել մի քանի նախաձեռնություններ՝ խթանելու մասնակցությունը ՆՄԿՈՒ-ում.

- (ա) սոցիալական գործընկերների կողմից կազմակերպված քարոզարշավներ, որոնք ի ցույց կդնեն մասնագիտական ուսուցման, մասնավորապես աշկերտությունների կարևորությունը,
- (բ) ֆինանսական խթանիչներ գործատուներին և ուսուցանվողներին,
- (գ) ջանքեր՝ ստեղծելու վարկանիշի համարժեքություն ակադեմիական և մասնագիտական ուղիների միջև,
- (դ) մեծացված միասնականություն ակադեմիական և մասնագիտական կրթության միջև:

² Իռլանդիայում բոլոր գործընթացները կողավորված են ISCED 3 ընդհանուրի տակ, մինչդեռ, ինչպես վկայում են ReferNet-ի՝ երկրների ուսումնասիրությունները, կա նաև մասնագիտական ուղղություն:

6.3. Ուսումնական ծրագրեր և որակավորումներ

Ուսումնական ծրագրի մշակման մեջ ներգրավված են մի քանի կազմակերպություններ.

- (ա) պետությունը կենտրոնական մակարդակում՝ սովորաբար Կրթության նախարարության օժանդակությամբ,
- (բ) սոցիալական գործընկերները մի շարք կոմիտեների միջոցով,
- (գ) որոշ երկրներում (Իտալիա, Նորվեգիա, Իսպանիա) տարածաշրջանային և համայնքային իրավասու անձինք ևս դերակատարություն ունեն հավելյալ չափորոշիչների ստեղծման գործում:


Տարբեր երկրների կրթության նախարարությունները կամ համապատասխան մարմինը սովորաբար ապահովում են օրենսդրական հենք ՆՄԿՈՒ ուսումնական ծրագրերի պատրաստման համար: Որոշ դեպքերում կրթության նախարարությունը ստանձնում է ավելի օպերացիոնալ դերակատարություն և սահմանում է առարկաներ, գնահատման ընթացակարգեր ու դասընթացների այլ մանրամասներ: Սա գործում է, օրինակ, Դանիայում և Իտալիայում:

Այնուամենայնիվ, շատ դեպքերում ուսումնական ծրագրերը հաստատվում են պետության, սակայն մշակվում են մի քանի գործակալությունների կողմից՝ ներառյալ կրթություն ու ուսուցում իրականացնողները (Էստոնիայում, Լիտվայում, Նիդեռլանդներում, Ֆինլանդիայում) և այլ մարմինները, ինչպիսիք են մասնագիտական խորհուրդներն Իսլանդիայում, Ուսումնական ծրագրերի և գնահատման ազգային խորհուրդն Իռլանդիայում: Այստեղ ընդհանուր կառուցվածքը սկսվում է պետությունից, որը սահմանում է համընդհանուր շրջանակը, որի ներսում առևտրային կամ մասնագիտական լիցենզավորված մարմինները՝ ներառյալ սոցիալական գործընկերները, մշակում են ուսումնական ծրագիր:

Ընդհանրապես, սոցիալական գործընկերների ազդեցությունը սահմանվում է աշխատաշուկայում սոցիալական գործընկերության համընդհանուր ազդեցությամբ: Ուստի և, կան եվրոպական հյուսիսային մի շարք երկրներ՝ Դանիա, Գերմանիա և Նիդեռլանդներ, որտեղ սոցիալական գործընկերների դերակատարությունը համեմատաբար մեծ է ՆՄԿՈՒ բովանդակությունը նախագծելու մեջ: Կան նաև երկրներ, օրինակ՝ ՄԹ-ն, որտեղ սոցիալական գործընկերությունն ավելի քիչ է հաստատված: ՄԹ-ում շեշտը դրվում է գործատուներին ձայն տալու վրա: Սոցիալական գործընկերությունը հիշատակվում է ՆՄԿՈՒ համակարգերի գործունեության հետ առնչվելիս, հատկապես՝ երաշխավորելու, որ ՆՄԿՈՒ-ն արագ է արձագանքում աշխատաշուկային, սակայն առկա են որակական էական

տարբերություններ սոցիալական գործընկերների իրական դերակատարության ու ազդեցության մեջ, ինչպես նշված է վերևում:

Գծապատկեր 2: Մասնակցությունն ընդհանուր և մասնագիտական կրթությանը ISCED 3-ում (ISCED 3-ում ընդհանուր մասնակցության %)



Աղբյուր՝ Eurostat, ԵՄ LFS, 2004

Ուսանողների % ISCED 3-ում

Վերջին տարիներին նկատելի է դառնում դպրոցների և տարածաշրջանային ու համայնքային իրավասու անձանց աճող ինքնավարության միտում ուսումնական ծրագրերի պատրաստման գործում: Ավստրիայում դպրոցները կարող են որոշել տարբեր առարկաներին տրվող ժամաքանակը, իսկ Գերմանիայում դպրոցներն ունեն պետության կողմից հաստատված ուսումնական ծրագրերին առնչվող ինքնավարության որոշակի աստիճան: Իսպանիայում ինքնավար տարածաշրջանները մշակում են ուսումնական ծրագրերի ուղենիշներ յուրաքանչյուր որակավորման համար, իսկ Շվեդիայում ընթացիկ այն պլանները, որոնք բնութագրում են, թե ինչպես պետք է դպրոցներն աշխատեն, սահմանվում են յուրաքանչյուր քաղաքապետարանի կողմից:

Դպրոցի վրա հիմնված համակարգում հստակ են մի քանի առանձնահատկություններ.

- (ա) որակավորման բազմամակարդակ համակարգի զարգացում,
- (բ) ընդհանուր ուժեղ բաղադրիչ,
- (գ) շեշտադրում տեսական և գործնական ուսումնառության վրա,
- (դ) դասընթացների/որակավորումների միավորում (մասնագիտական կրթությունը դարձնելով ավելի լայնածավալ),
- (ե) ձեռք բերված նախկին ուսումնառության ճանաչում (հատկապես, երբ տեղի է ունենում անցում),
- (զ) ուսումնառության անհատականացում,
- (է) ապագայի հեռանկարներ:

Ուսումնական ծրագրերը մշակվել են՝ թույլ տալու, որ տեղի ունենա առաջընթաց: Որոշ դեպքերում սա կախված է այն մասնագիտությունից, որին ուղղված է դասընթացը, որովհետև կան մի քանի զբաղմունքներ, որոնք պահանջում են ուսումնառության բարձր մակարդակներ: Դա նաև կախված է անհատների կարողությունից՝ նրանց՝ ուսումնառության բարձր մակարդակներից օգուտ քաղելու ընդունակությունից: Որակավորումների առաջադիմական համակարգի առկայությունը ևս կարող է օժանդակել մուտքի հնարավորությանը հետմիջնակարգ և բարձրագույն կրթություն:

Մասնագիտական դասընթացները հակված են ունենալու ընդհանուր ուժեղ բաղադրիչ՝ անհատներին ապահովելով առանցքային (թվաբանություն, գրաձանաչություն և օտար լեզվի կարողություն) և քաղաքացիությանն առնչվող հմտություններ (մարդկանց դարձնելու պատասխանատու քաղաքացիներ): Ընդհանուր և մասնագիտական հմտությունների միջև հարաբերակցությունը սովորաբար բնութագրվում է յուրաքանչյուր գործողությանը հատկացվող ժամաքանակով:

Դասընթացների մասնագիտական հատվածներում, կախված նրանից, թե ինչ մակարդակով են դրանք իրականացվում, անհրաժեշտություն կա՝ ձեռք բերելու տեսական ընկալում դասավանդվող մասնագիտական հմտությունների մասին և ի վիճակի լինելու դրսևորել գործնական կարողություններ:

Որոշ երկրներում (Իսպանիա, Ֆինլանդիա) կա նաև հնարավորություն, որ այլ վայրում ձեռք բերված փորձն ու որակավորումները կարող են իրավունք հանդիսանալ տվյալ դասընթացն ավարտելու համար: Սա կարելի է իրականացնել կամ կրեդիտային համակարգի, կամ էլ կարողության ստուգման միջոցով: Կրկին, սա ամենևին էլ ընդհանուր հատկանիշ չէ, սակայն այն աստիճանաբար գործի է դրվում որոշ երկրներում:

Դասընթացների միավորումն իր ազդեցությունն է ունեցել մի քանի հաստատությունների վրա, որոնք իրականացնում են ուսուցում և ուսումնառություն՝ շատ երկրներում առկա դպրոցների/քոլեջների միավորմամբ. սա հանգեցնում է կրթություն/ուսուցում իրականացնողների կրճատմանը: Սովորաբար դա տեղի է ունենում անհատական հաստատություններին մեծ ինքնավարություն տալու ժամանակ (թե ինչպես են նրանք իրականացնում դասընթացներ), նույնիսկ եթե ուսումնական առանցքային ծրագիրը հաստատվում է պետական մարմինների կողմից: Նկատելի մի փաստ ևս կա, որ ուսումնառության անհատականացումը տեղի է ունենում այն դեպքում, երբ հաստատություններն ունենում են ինքնավարության որոշակի աստիճան՝ իրականացնելու դասընթացներ այն եղանակով, որն ամենահամապատասխանն է իրենց ուսանողին:

Զնայած վերը նշված մի քանի զարգացումների՝ շատ երկրներում ծրագրերի մեծ մասն իրականացվում է նեղ մասնագիտական կենտրոնացմամբ: Հիմնախնդիրն այստեղ այն չափաքանակն է, որով այդ ծրագրերը անհատներին ապահովում են նրանց գործունակությանն օժանդակող հմտություններ:

Որտեղ առկա է նեղ մասնագիտական կենտրոնացում, վիճարկելի հարց է դառնում, թե արդյո՞ք ընդհանուր կրթության (առանցքային և քաղաքացիությանն առնչվող հմտություններ) վրա դրվող շեշտը բավարար է՝ անհատներին ապահովելու հմտություններ, որոնք թույլ կտան նրանց փոխել կարիերայի ուղիներն աշխատաշուկայում՝ համեմատած ավելի լայնամասշտաբ մոտեցում ունեցող համակարգերի հետ: Սա տարբերություն է ոչ միայն երկրների, այլ նաև առարկաների միջև:


6.4. Արդյունքներ և առաջընթաց

Կրթության մեջ անցման և շարունակականության կարևորությունը բխում է երկու փոխկապակցված գործոններից: Նախևառաջ, որոշումներ կայացնող 16/17 տարեկան երիտասարդ անձանց վտանգ, ովքեր որոշ առումով անուղղելի են, մինչդեռ անցման հեշտացումը նրանց հնարավորություն կտա անցնել մի ուղուց մյուսին: Երկրորդ, բարձրագույն մակարդակի կրթության աճող կարևորություն (ելնելով շատ երկրներում կրթության այս տեսակից ստացվող շահույթի համեմատաբար բարձր ցուցանիշներից) և այս մակարդակում մասնակցությունը մեծացնելու մղում:

Գծապատկեր 3-ը ցույց է տալիս ՆՄԿՈՒ ներկայիս ուղիները: 1-ին և 2-րդ հոսքերը գործում են ներկայիս համակարգերում, իսկ 3-րդ հոսքը այն միասնականացված ձևում մոդելն է, որը ձգտում են մշակել շատ երկրներ.

- (ա) Հոսք 1-ում երրորդ մակարդակի կրթությունը համասեռ է և միտված է չտարբերակելու մասնագիտական և ակադեմիական կրթության միջև, քանի դեռ դասընթացներն իրականացվում են այն հաստատություններում, որոնք ապահովում են դասընթացի երկու տեսակը միաժամանակ և սահմանում են ընդհանուր չափորոշիչ մուտքի համար (սովորաբար հիմնվելով ակադեմիական որակավորման վրա): Ավագ միջնակարգ մակարդակում մասնագիտական որակավորումների համար սովորող անձանց համար կարող է փոխարկման դասընթացի որոշ տեսակի անհրաժեշտություն լինի, որն էլ պետք է երրորդ մակարդակի կրթություն մուտք գործելու համար,
- (բ) Հոսք 2-ում մասնագիտական և ակադեմիական ուղիները տանում են դեպի մասնակցության երրորդ մակարդակի որոշակի հաստատություններում: Այս առումով մասնագիտական և ակադեմիական ուղիները տարբեր են կրթության համակարգի բոլոր մակարդակներում՝ համակարգերի միջև անցումը դարձնելով դժվար և՛ անհատի, և՛ ցանկացած հաստատության համար, որի առջև դրված է անցման խնդիր: Հաճախ, երբ անհատները փորձում են կատարել անցում, նրանք ստիպված են լինում կրկին սկսել՝ կորցնելով ժամանակ,
- (գ) Հոսք 3-ը ցույց է տալիս, որ շատ երկրներ փորձում են ստեղծել մի համակարգ, որը թույլ կտա մարդկանց հեշտությամբ անցում կատարել համակարգերի միջև: Երկրների մեծ մասը դեռ միայն առաջին քայլերն է անում՝ զարգացնելու անցման մեթոդներ ուսումնական ծրագրերի և լիազորագրման ընթացակարգերի մշակման միջոցով:

Գծապատկեր 3: Առաջընթացն ու անցումն ակադեմիական (ուսումնական) և մասնագիտական ուղիների միջև



Երկրների օրինակներ

- Հոսք 1: սա սահմանված կարգ է շատ երկրներում: Մասնագիտական հոսքը դիտարկվում է որպես առանձին, և եթե անհատները պետք է տեղաշարժվեն մասնագիտական հոսքից՝ մուտք գործելու բարձրագույն կրթություն, նրանք պետք է հանձնեն քննություն կամ հավաքեն կրեդիտներ, որոնք թույլ կտան, որ տեղի ունենա անցում: Ուստի և, անցումը մասնագիտականից ակադեմիական հոսք սահմանափակված է օրինակ՝ Գերմանիայում և Դանիայում:
- Հոսք 2: այն երկրներում, որտեղ կա հաստատված մասնագիտական բարձրագույն սեկտոր, օրինակ՝ Ֆրանսիայում, որտեղ աշկերտությունն առկա է ISCED մակարդակ 5-ում, ՄԹ-ում, որտեղ կան առանձին մասնագիտական որակավորումներ ենթաբակալավրի մակարդակում, կամ Ավստրիայում, որտեղ կան առանձին մասնագիտական քոլեջներ բարձրագույն մակարդակում:
- Հոսք 3: սա ձգտում է, մեծ ցանկություն, որ առկա լինի մի համակարգ, որը թույլ կտա մարդկանց տեղաշարժվել հոսքերի միջև՝ բավարարելու իրենց անհատական կարիքները՝ կրելով դասընթացները վերսկսելու տույժ անցում կատարելիս: Դեռևս ոչ մի երկիր հստակ չի հասել այս կարգավիճակին, սակայն քաղաքականության շեշտը դրվում է մի համակարգ ստեղծելու վրա, որը կքանդի ՆՄԿՈՒ և ընդհանուր/ակադեմիական կրթության միջև տարբերության կարծրատիպը:

Մի քանի որոշարկելի գործոններ օժանդակել են անցմանը, սակայն ինստիտուցիոնալ արգելքները դեռևս առկա են որոշ երկրներում: Այդ գործոններից են.

- (դ) ընդհանուր կրթության խիստ առանցքային ուսումնական ծրագիրը մասնագիտական դասընթացներում,
- (ե) որոշ երկրներում՝ Նորվեգիայում, Շվեդիայում, բոլոր ուսանողները (մասնագիտական և ակադեմիական) մնում են նույն դպրոցում իրենց ավագ միջնակարգ կրթության առաջին տարիներին կամ գոնե անցնում են մի քանի նույն առարկաներ,
- (զ) մի քանի երկրներում՝ Լեհաստանում, ներդրվել է անցում թույլատրող կրեդիտների համակարգ, օրինակ՝ x դասընթացի կրեդիտների առկա թվաքանակը կներառվի նաև y դասընթացի ավարտման մեջ, որին անցել է անհատը՝ օրինակ՝ որակավորումների ազգային շրջանակի օժանդակությամբ: Տեսականորեն, կրեդիտների առկա թվաքանակը կարող է ներառվել բարձրագույն մակարդակի դասընթացներ մուտք գործելու համար սահմանված որակավորման չափանիշների մեջ (Ֆինլանդիա, ՄԹ),
- (է) սա երբեմն կապակցվում է որակավորման համակարգին և նախագծվել է՝ թույլ տալու համեմատականություն որակավորումների միջև (10 մակարդակով համակարգ Իռլանդիայում. մակարդակ 1 բազայինից մակարդակ 10 դոկտորական),
- (ը) մոդուլային ուսուցման կիրառում՝ թույլ տալով մարդկանց ավելի հեշտ տեղաշարժվել դասընթացների միջև:

Սակայն կա նաև պասիվության մեծ ազդեցություն.

- (ա) քիչ մարդիկ են կատարում անցում աշկերտությունների միջև,
- (բ) շատ երկրներում կա համոզմունք, որ ավելի հեշտ է անցնել ակադեմիականից մասնագիտական հոսք, քան հակառակը,
- (գ) երբ մասնագիտական կրթությունն իրականացվում է առանձին հաստատություններում, դա կարող է խոչընդոտ հանդիսանալ անցման համար (ավելի հեշտ է անցում կատարել մեկ, քան երկու հաստատությունների միջև),
- (դ) երբ կրթության և ՆՄԿՈՒ համակարգի համար պատասխանատվությունը բաշխվում է տարբեր մարմինների միջև (ազգային, տարածաշրջանային և համայնքային):

7. Աշկերտություն

7.1. Իրականացման կառուցվածքը

Աշկերտական ուսուցումը վերաբերում է ուսումնառության համակարգված պլանին, որը բաշխված է աշխատավայրի և ուսուցման կենտրոնի/հաստատության միջև: Աշկերտության դասական օրինակ է, երբ անհատները ստանում են գործնական ուսուցում աշխատավայրում և ընդհանուր/տեսական կրթություն՝ ուսուցման կենտրոնում կամ հաստատությունում՝ սոցիալական գործընկերների ու ոլորտային/մասնագիտական մարմինների կողմից սահմանված առանցքային ուսումնական առանցքային ծրագրով, որը կարելի է մշակել տեղական մակարդակում: Եվրոպական մի շարք, հատկապես հյուսիսային երկրներում աշկերտությունը ՆՄԿՈՒ գերիշխող տեսակն էր 20-րդ դարի ընթացքում, սակայն այժմ կա երիտասարդների համար հասանելի լայն տարբերակների մի շարք. ազգային շատ համակարգեր ձեռնամուխ են եղել աշկերտական համակարգի բարեփոխմանը՝ այն դարձնելու ավելի գրավիչ երտասարդների համար և աշխատաշուկային համապատասխան և՛ այժմ, և՛ հետագայում:

Ինչպես կքննարկվի ստորև, աշկերտությունը դեռևս շատ դեպքերում ապահովում է մասնագիտացված մասնագիտական պատրաստվածություն՝ տալով զբաղվածության հնարավորություն: Դեռ խնդիրներ կան այն առումով, թե որքանով են ապահովվում փոխանցելի հմտություններ, և որքանով է աշկերտական ուսուցումը ենթադրում առաջընթաց ՆՄԿՈՒ-ի համատեքստում (կամ անցում ՆՄԿՈՒ այլ հոսքեր): Տեղի է ունեցել ընդունվելու և ավարտելու տարիքի որոշակի վերանայում. որոշ դեպքերում ավարտելու տարիքը հասել է մինչև 29 տարեկան՝ ջանալով մեծացնել դիմորդների քանակը (Իտալիա):

Կարելի է դասակարգել այսպես, երկրներ, որտեղ՝

- (ա) չկա աշկերտական համակարգ (Չեխիայի Հանրապետություն, Լիտվա, Սլովակիա),
- (բ) առկա են բնակչության քիչ մասի վրա ներգործություն ունեցող փոքրածավալ գործընթացներ (Էստոնիա, Հունաստան, Կիպրոս, Լատվիա, Շվեդիա, ՄԹ),
- (գ) առկա է մեծածավալ գործընթաց: Դանիայում այն ՆՄԿՈՒ-ի միակ ընդունված տեսակն է, իսկ Գերմանիայում կազմում է հետպարտադիր կրթության երկու երրորդը:

Հունգարիայում աշկերտությունը դասակարգված է ոչ թե որպես առանձին ուղի, այլ պարզապես կրթական մի քանի մակարդակներում գործնական ուսուցում տրամադրելու միջոց:

7.2. Մուտքի հնարավորության պահանջներ

Աշկերտություն մուտք գործելը սովորաբար պայմանավորած է ցածր միջնակարգ մակարդակի կրթությունը բարեհաջող ավարտելու հետ, սակայն որոշ դեպքերում (Լեհաստան, Իսպանիա³) այն նաև ուսուցման մի ձև է, որը նախատեսված է այն մարդկանց համար, ովքեր չեն ավարտել ցածր միջնակարգ դպրոցը, ունեն դժվարություններ ուսուցման այլ ձևաչափեր կամ աշխատաշուկա մուտք գործելու համար: Այս դեպքերում տեղի է ունենում համընկնում հատուկ այն ծրագրերի հետ, որոնք օժանդակում են սոցիալական մերժման ենթակա խոցելի երիտասարդներին:

Աշկերտական բոլոր համակարգերում շեշտը դրվում է գործատուի հետ և արհեստագործական ուսումնարաններում անցկացվող ժամանակի վրա, որտեղ աշկերտներին տրամադրվում է և՛ ընդհանուր կրթություն, և՛ տեսական ընկալում իրենց մասնագիտության մասին: Ընդհանուր առմամբ, աշխատավայրում ուսուցման և ուսուցման հաստատության միջև հարաբերակցությունը սահմանվում է կանոնակարգով: Որպես կանոն, աշկերտները ձեռնարկության գործառուներն են (սակայն շատ դեպքերում միայն մինչև ավարտվում է ուսուցումը): Պայմանագիրը կնքվում է գործատուի և աշկերտի միջև, գործատուի, ով հետևում է աշկերտների վարձման հետ կապված տարբեր կանոնակարգերի և հաստատության, որն իրականացնում է աշկերտություն (ուսումնական հաստատություն): Երբ առկա են հավաքական համաձայնագրեր, դրանք կենտրոնական են՝ սահմանելու աշկերտների թվաքանակը, նրանց պայմանագրային կարգավիճակը և վարձատրության մակարդակները:

Աշկերտական ուսուցումը սկսվում է ավագ միջնակարգ մակարդակի մեկնարկով և տևում է երկուսից չորս տարի: Ընդհանրապես, դա ուսուցման տեսակ է, որը բաց է 16-25 տարեկան մարդկանց համար, և որն ակնկալվում է, որ կավարտվի 21-25 տարեկանում (կախված երկրից): Այնուամենայնիվ, կա զգալի տարբերություն և՛ երկրների, և՛ մասնագիտական ոլորտների միջև, որտեղ աշկերտությունները տևում են միայն մեկ կամ երկու տարի:

³ Իսպանիայում դա ավելի շատ «ուսումնական հաստատությունում գործնական հմտություն», քան «պայմանագրային ուսուցում» ձևաչափն է:

7.3. Մասնակցության խթանում

Աշկերտությունները ներկայումս ցույց են տալիս աճի ցուցանիշներ, օրինակ՝ Հունգարիայում թվաքանակները եռապատկվել են 2000-2005թթ.-ին, իսկ ՄԹ-ում աշկերտների թվաքանակն աճել է անկման ժամանակաշրջանից հետո:

Կառավարությունները ջանում են մեծացնել աշկերտների թվաքանակը, որովհետև այն ընդունվում է որպես արդյունքի ապահովում, որի համար կա մեծ պահանջարկ աշխատաշուկայում: Մասնակցությունը խթանվում է երկու եղանակով.

- (ա) սոցիալական գործընկերների կողմից կազմակերպվող քարոզարշավներ՝ ընդգծելու աշկերտություն անցնելու շահեկանությունն անհատի և գործատուի համար,
- (բ) խթանների ապահովում՝ ծածկելու գործատուների ծախսերի որոշ մասն աշկերտներ ընդունելիս (օրինակ՝ աշկերտների աշխատավարձերն ուսուցման ընթացքում):

Փորձեր են նաև արվում՝ ուսումնական ծրագրերը դարձնելու ավելի գրավիչ ուսանողների համար, օրինակ՝ Ավստրիայում շեշտը դրվում է օտար լեզվի ուսուցման վրա: Դրանք ապահովում են լայնածավալ, ընդհանուր կրթություն՝ մեծացնելու անհատ աշկերտի աշխատունակությունը: Ինչպես նշվեց վերևում, քայլեր են ձեռնարկվել՝ բարձրացնելու այն առավելագույն տարիքը, որով մարդիկ աշկերտության իրավունք կունենան՝ այսպիսով մեծացնելով այն մարդկանց պաշարը, որոնցով կարելի է համալրել աշկերտությունները:

7.4. Ուսումնական ծրագրեր

Ուսումնական ծրագրերը մշակվում են պետական կամ տարածաշրջանային կանոնակարգող մարմինների կողմից՝ բավարարելու արդյունաբերության/գեղարվեստի չափորոշիչները: Ընդհանրապես, պետությունը շրջանակի ապահովման մեջ ունի իր դերակատարությունը, որտեղ առևտուրը կամ արդյունաբերությունը ներկայացնող փորձագիտական խմբերը (սովորաբար դա ներառում է նաև սոցիալական գործընկերներին) մշակում են ուսումնական ծրագիր իրենց համապատասխան աշկերտությունների համար:

Ինչպես ցույց են տալիս աշկերտական ուսուցման օրինակներից շատերը, շեշտը դրվում է ընդհանուր և մասնագիտական կրթության վրա և՛ տեսականորեն, և՛ գործնականորեն: Այնպիսի երկրներում, ինչպիսիք են Դանիան և Գերմանիան, սովորաբար կա առանցքային ուսումնական ծրագիր, որի շրջանակներում նախագծվում է ուսուցման անհատականացված ծրագիրը՝ երաշխավորելու, որ աշկերտի և գործատուի կարիքները բավարարվում են: ՄԹ-ն բացառություն է այն իմաստով, որ ընդհանուր կրթությունն այստեղ աշկերտական ծրագրի

կարևոր բաղադրիչը չէ, բացի այն դեպքերից, երբ դա հարկավոր է մասնագիտական կարիքները բավարարելու համար (մաթեմատիկական տեխնիկական աշկերտություններում):

Չնայած շատ համակարգերում ընդհանուր կրթությանը հատկացվող կարևորությունից, աշկերտական համակարգում ընդհանուր առմամբ առաջընթացի քիչ հնարավորություն է ընձեռվում (կամ անցում ՆՄԿՈՒ այլ հոսքեր): Բացառություններ են Ֆրանսիան, Իտալիան և Հունգարիան: Իտալիան վերջերս ներմուծել է բարձրագույն մակարդակի աշկերտական համակարգ, իսկ Ֆրանսիական համակարգը թույլ է տալիս աշկերտական ուսուցում ISCED 5-ում, նույնիսկ եթե դրա մեծ մասն իրականացվում է ISCED 2-ում: Այս համակարգերում ենթադրելի առաջընթացի գաղափարն է: Հունգարիայում աշկերտությունն իրականացվում է մի քանի մակարդակներում՝ որպես գործնական փորձ ձեռք բերելու միջոց: Այնպիսի երկրներում, ինչպիսիք են Գերմանիան և Իսլանդիան, կա նաև վարպետի մակարդակի որակավորում ձեռք բերելու հնարավորություն (ISCED 4-ում): Նմանապես, Ղանիայում գործում է երկու փուլով աշկերտություն, առաջինը տալիս է հմուտ աշխատողի, իսկ երկրորդը՝ վարպետի մակարդակի վկայական:

Աշկերտությունների բարեփոխումը սովորաբար ենթակա է շահագրգիռ կողմերի համաձայնությանն ազգային, տարածաշրջանային, համայնքային և ոլորտային մակարդակներում:

7.5. Արդյունքներ

Աշկերտության նպատակն է՝ ապահովել մասնագիտական ուսուցում, որը տեղի է ունենում ուսումնարաններում կամ ուսումնական հաստատություններում և աշխատավայրում, կամ ավելի շատ գործնական պարապմունք՝ ուսանողներին պատրաստելու զբաղվածության: Երկրների մեծ մասում աշկերտական ուղի առաջարկելուն, աշկերտությունն ավարտելուն հետևում է վկայականի կամ ֆորմալ որակավորման շնորհումը: Մի շարք երկրներում, ինչպիսիք են Նիդեռլանդները և Պորտուգալիան, այդ որակավորումն ուսանողներին կարող է հնարավորություն տալ մուտք գործել կրթության կամ ուսուցման հետագա ծրագրեր, մինչդեռ այլ երկրներում, ինչպիսին է Լատվիան, դա չի գործում: Լեհաստանում և Շվեդիայում, երաշխավորելու համար մուտքի հնարավորությունը հետագա ուսումնառություն, աշկերտական ծրագիրը պետք է լրացվի տեսական հավելյալ ուսումնառությամբ կամ դասընթացներով:

Այնուամենայնիվ, աշկերտական ուղղությունը հիմնականում դիտարկում է որպես անմիջապես աշխատաշուկա տանող ուղղություն, և շատ երկրներում այս ուղին, ծրագիրը բարեհաջող ավարտելն աշկերտներին թույլ է տալիս ձեռք բերել զբաղվածություն որոշակի

մասնագիտությունների գծով և համարվել տվյալ մասնագիտության որակյալ աշխատող: Առաջընթացը հաճախ ավելի շատ պատկանում է ցկյանս ուսումնառությանը, քան աշկերտական ծրագրի համակարգված տարր լինելուն:

8. Հատուկ ծրագրեր

8.1. Իրականացման բնույթը

Հատուկ ծրագրերի առկայության նպատակն է օժանդակել այն երիտասարդներին, ովքեր կանգնած են գործազուրկ մնալու վտանգի առջև և/կամ ջանում են գտնել ուսուցման վայր: Դրանք գլխավորապես վերաբերում են երիտասարդներին առանցքային հմտություններ ապահովելուն, որոնք կօգնեն նրանց գտնել աշխատանք կամ ապահովել տեղ ֆորմալ ՆՄԿՈՒ համակարգի ուսուցման ծրագրում:

Փաստերը վկայում են, որ գոյություն ունեն աշխատաշուկայի էական տույժեր կրթության ցածր մակարդակ ունեցող անհատների համար, ովքեր գործազուրկ լինելու ամենամեծ հավանականությունը և կյանքի ընթացքում եկամուտի ամենացածր մակարդակներն ունեն (ՏՀԶԿ/OECD/, 2006): Հետևաբար, շեշտը դրվում է մասնակցությունը քաջալերելու վրա, հատկապես երրորդ մակարդակում, սակայն այս քաղաքականության մեջ կա համոզմունք, որ շատերի համար դժվար է ձեռք բերել կրթության նույնիսկ բազային մակարդակ: Ուստի, հատուկ ծրագրերի նախագծման նպատակն է օժանդակել այս մարդկանց:

Շատ երկրներ տրամադրում են հատուկ ծրագրեր՝ աջակցելու սոցիալական մերժման վտանգի ենթակա երիտասարդների կրթություն-աշխատանք անցմանը (հաճախ նրանց, ովքեր ձախողել են ստանալ ցածր միջնակարգ կրթության բավարար մակարդակ⁴): Այն կազմում է աշխատաշուկայի ակտիվ քաղաքականության համընդհանուր խճանկարի մի մասը և երբեմն համընկնում է այն ծրագրերի հետ, որոնք միտված են՝ օժանդակելու մեծահասակներին: Կարելի է որոշարկել գործընթացների մի քանի տեսակ.

(ա) ծրագրեր, որոնք հատուկ նախագծված են՝ օժանդակելու երիտասարդներին սովորաբար առանցքային հմտությունների (թվաբանություն և գրաձանաչություն) զարգացման գործում,

⁴ Ինչպես նշված է վերևում, այս առումով կա որոշակի համընկնում աշկերտական համակարգերի հետ:

(բ) ծրագրեր՝ նպատակաուղղված անհատների հատուկ խմբերին աշխատաշուկայում՝ անկախ տարիքից:

Աղյուսակ 2-ում նշված են այն երկրները, որոնք ունեն հատուկ ծրագրեր:

Աղյուսակ 2: Ծրագրերի իրականացում՝ օժանդակելու մտավոր անկարողությունակներին

	Չի իրակա- նացվում		Իրա- կանա- ցում		Իրա- կանա- ցում
Էստոնիա	X	Բելգիա	√	Նիդեռլանդներ	√
Հունաստան	X	Չեխիայի Հանր.	√	Ավստրիա	√
Իսպանիա	X	Դանիա	√	Լեհաստան	√
Իտալիա	X	Գերմանիա	√	Պորտուգալիա	√
Կիպրոս	X	Իռլանդիա	√	Սլովենիա	√
Իսլանդիա	X	Ֆրանսիա	√	Սլովակիա	√
Նորվեգիա	X	Լատվիա	√	Ֆինլանդիա	√
		Լիտվա	√	Շվեդիա	√
		Հունգարիա	√	Միացյալ Թագավորություն	√

Երբ խմբերը դժվար հասանելի են կամ դժվար է դառնում մարդկանց համար պայմաններ ստեղծել ուսումնառության ընթացքում, հստակ են դառնում մի քանի այնպիսի առանձնահատկություններ, ինչպիսիք են մարդկանց՝ ծրագիր կրկին մուտք գործելու թույլտալությունը, դասընթացների տրամադրումն այն ձևաչափում, որը հարմար է նրանց, մարդկանց սեփական համայնքներում ուսումնառության ապահովումը: Այլ ծրագրերը, այնուամենայնիվ, ավելի պարզորոշ են՝ ապահովելով ամրագրված ծրագիր մի քանի տարվա համար, որն ավարտելուն պես հետևում է վկայագրի ձեռքբերումը:

Որոշ երկրներ բարձրացրել են դպրոցն ավարտելու տարիքը մինչև 17-18 տարեկան՝ հանգեցնելով նրան, որ մասնակցությունը հատուկ ծրագրերին կարող է լինել պարտադիր, եթե անհատները ձեռք չեն բերել մուտքի հնարավորություն այլ դասընթացներ կամ ծրագրեր (Իտալիա): Ընդհանրապես, մասնակցությունը կրում է կամավոր բնույթ, չնայած երբեմն լինում են սոցիալական անվտանգության համակարգի կողմից անուղակիորեն ապահովվող ուժեղ խթաններ՝ խրախուսելու մարդկանց մասնակցությունը, հատկապես, երբ անհատին վճարվում են գումարներ անձնական կարիքների համար՝ մասնակցելու այս ծրագրերին:

Չեխիայի Հանրապետությունը և Սլովենիան բացառություն են այն առումով, որ ապահովում են նաև հատուկ ծրագրեր նրանց համար, ովքեր ցանկություն ունեն շարունակել իրենց մասնագիտական պատրաստվածությունը, Սլովենիայում դասընթացները մատչելի են այն մարդկանց համար, ովքեր ավարտել են իրենց մասնագիտական ուսուցումը, բայց կցանկանային սկսել իրենց սեփական բիզնեսները, իսկ Չեխիայի Հանրապետությունում լեզվի հատուկ դասընթացները սահմանված են նրանց համար, ովքեր ավարտել են ավագ միջնակարգ մակարդակը⁵:

8.2. Մուտքի հնարավորության պահանջներ

Գոյություն ունեն փոքրաթիվ սահմանափակումներ երիտասարդական այլ ծրագրեր մուտք գործելիս: Մուտքի հնարավորությունը սահմանվում է մեծամասամբ ՆՄԿՈՒ այլ ծրագրեր ներգրավվելու արտոնություն չունենալով (Աղյուսակ 3): Բացի տարիքային սահմանափակումներից (սովորաբար մարդիկ պետք է լինեն 25 տարեկան կամ ավելի ցածր), կան մուտքի քիչ պահանջներ (Դանիայում, Ավստրիայում, Լեհաստանում և Պորտուգալիայում մարդիկ պետք է ավարտած լինեն պարտադիր կրթությունը), ինչպես ստորև ցույց է տալիս աղյուսակ 3-ը:

Կա նաև հատկացումների գործընթաց, որը պետք է նկատի ունենալ: Մի քանի երկրներում կա ստաժավորման գործընթաց, համաձայն որի երիտասարդները նշանակվում են դասընթացների: Օրինակ՝ Ավստրիայում զբաղվածության պետական ծառայությունը երիտասարդներին նշանակում է համապատասխան դասընթացների, Լիտվայում երիտասարդներին կարող են ուղարկել Երեխաների իրավունքների պաշտպանության գործակալությունը կամ Երիտասարդության հարցերի տեսչությունը, իսկ Լեհաստանում՝ սոցիալական ծառայությունները, ոստիկանությունը կամ դպրոցական կարիերաների խորհրդատուները:

Ընդհանուր առմամբ, մուտքի հնարավորությունը երիտասարդական այլ ծրագրեր դատապարտված է ձախողման՝ ապահովելու տեղ ՆՄԿՈՒ այլ ծրագրում կամ տևական զբաղվածություն ավագ միջնակարգ կամ աշկերտական մակարդակում:

⁵ Վիճարկելի հարց է, թե արդյո՞ք այս դասընթացները Սլովենիայում և Չեխիայի Հանրապետությունում պետք է դասակարգվեն որպես հետմիջնակարգ/ոչ բարձրագույն կրթություն:

Աղյուսակ 3: Երիտասարդական այլ ծրագրեր մուտքի հնարավորության պահանջներ

Մուտքի հնարավորության պահանջներ	
Բելգիա	Թիրախ խումբը երիտասարդներն են, ովքեր դադարեցրել են մասնակցությունն ուսուցմանը և/կամ գործազուրկ են:
Չեխիայի Հանր.	Մուտքի հնարավորությունը սահմանվում է լեզվի մասնավոր դպրոցների կողմից:
Դանիա	Պարտադիր կրթության ավարտ:
Գերմանիա	Երիտասարդներ, ովքեր չունեն աշխատաշուկա մուտք գործելու պատրաստակամություն:
Իռլանդիա	D աստիճանից ցածր կրթությամբ 15-18տ. երիտասարդները ստանում են վկայական (Junior Certificate):
Ֆրանսիա	26 տարեկանից ցածր անձինք, ովքեր չունեն որակավորումներ, գործազուրկները: Մուտքի հնարավորության առանձնահատուկ պահանջները կախված են որոշակի դասընթացներից:
Լատվիա	Մուտքի հնարավորության ոչ մի առանձնահատուկ պահանջ:
Լիտվա	12-16 տարեկան անձինք, ովքեր ձախողվել են ցածր միջնակարգ կրթությունում և 16-18 տարեկան անձինք, ովքեր ցանկանում են կատարելագործել իրենց հմտությունները:
Հունգարիա	Մուտքի ոչ մի առանձնահատուկ պահանջ:
Նիդեռլանդներ	Մուտքի հնարավորության ոչ մի առանձնահատուկ պահանջ:
Ավստրիա	Պարտադիր կրթության առնվազն երկու տարի և ձեռքբերման ձախողում, աշկերտություն:
Պորտուգալիա	15 տարեկան երիտասարդներ, ովքեր ավարտել են պարտադիր կրթությունը:
Սլովենիա	Մասնագիտական կրթության բարեհաջող ավարտ:
Ֆինլանդիա	Մուտքի հնարավորության ոչ մի առանձնահատուկ պահանջ:
Շվեդիա	ՆՄԿՈՒ այլ ծրագրերին մասնակցելու չարտոնվածություն:
ՄԹ	Երիտասարդներ, ովքեր չունեն աշխատաշուկա մուտք գործելու պատրաստակամություն:

Աղբյուր: Cedefop ReferNet (Տեղեկատու համացանց):

8.3. Ուսումնական ծրագրեր

Ինչպես երիտասարդական այլ ծրագրեր իրականացնող բոլոր երկրներում, նպատակն առանցքային հմտությունների ապահովումն է, որը թույլ կտա անհատներին մասնակցել աշխատաշուկային: Դա իր հերթին միտված է գործազրկությունից խուսափելուն: Բնորոշ այլ գծերը, որոնք արժանի են հիշատակման, հետևյալն են.

- (ա) օժանդակություն որոշակի խնդիրներով (ալկոհոլի չարաշահում) երիտասարդներին (Ֆինլանդիայում),
- (բ) դասընթացները միտված են ոչ թե քննության ենթարկելու, այլ հաճախ հանգեցնելու հաճախումների վրա հիմնված վկայականի,
- (գ) Ավստրիայում և Իռլանդիայում իրականացումը նախագծված է՝ հեշտացնելու առաջընթացը, Շվեդիայում՝ մուտք գործելու աշկերտական համակարգ, իսկ Իռլանդիայում՝ հասնելու առաջընթացի փուլի երիտասարդական ծրագրում (Youthreach programme),
- (դ) Ավստրիայում և Լեհաստանում դասընթացներն ունեն ընդհանուր կառուցվածք աշկերտական ուսուցման առաջին տարում,
- (ե) Դանիայում ծրագրերն ունեն մոդուլային ասպեկտ, որպեսզի ուսուցման մեկ մոդուլի ավարտը ճանաչվի ուսուցման այլ ծրագրերի կողմից,
- (զ) Դանիայում և Շվեդիայում առկա է կողմնորոշում անհատի հատուկ կարիքների վրա,
- (է) Լեհաստանում շեշտադրվում է գործնական կողմնորոշումն աշխատանքի վայրում ուսուցման հետ միասին,
- (ը) միջնակարգ կրթության այլընտրանքային հոսք Լիտվայում:

Չնայած իրականացման բնույթի միջև վերոնշյալ տարբերություններին՝ բոլոր երկրներում շեշտը դրվում է բազային գրաճանաչություն, թվաբանություն և զբաղվածության համար անհրաժեշտ հմտություններ ապահովելու վրա՝ թույլ տալու մարդկանց գործել աշխատաշուկայում:

8.4. Արդյունքներ

Ուսումնառության արդյունքները բոլոր երկրներում բնութագրվում են որակավորումների և/կամ վկայագրերի տրամադրման համեմատությամբ, բացի Իռլանդիայից, որտեղ ուսումնառության արդյունքները սահմանվում են համաձայն դեպի զբաղվածության, կրթության կամ ուսուցման անցման: Երկրները կարելի է դասակարգել հետևյալ կերպ.

(ա) դասընթացներ, որոնց հետևում է որակավորման ձեռքբերումը քննության միջոցով, ինչպես Լատվիայում, Լիտվայում, Լեհաստանում և Պորտուգալիայում: Երբ անհատներին չի հաջողվում ձեռք բերել որակավորում, ապա ակնկալվում է վկայագրի շնորհում՝ հիմնվելով հաճախումների վրա: Որակավորման ձեռքբերումն ապահովում է մուտքի հնարավորություն ՆՄԿՈՒ այլ ծրագրեր միջնակարգ մակարդակում կամ աշկերտությունում,

(բ) երկրներ, որոնք ավելի շատ հակված են վկայագրի ձեռքբերմանը, քան քննությանը, ինչպես Ղանիայում, Ավստրիայում, Ֆինլանդիայում և Շվեդիայում: Ղանիայում և Շվեդիայում ծրագրերից բխող արդյունքը ՆՄԿՈՒ այլ ծրագրեր մուտք գործելու հնարավորություն է տալիս:

Բացի տարբեր ծրագրերի ազդեցության վերաբերյալ որոշ մեկնաբանություններից, չեն տրամադրվում գնահատման տվյալներ այն չափաքանակի մասին, որով երիտասարդական այլ ծրագրերը կարող են օգտակար գտնվել անկարողունակ երիտասարդներին աշխատաշուկայի հետ վերակապակցելու գործում:

9. Հետմիջնակարգ, ոչ բարձրագույն ՆՄԿՈՒ

9.1. Իրականացման կառուցվածքը

ՆՄԿՈՒ-ն այս մակարդակում տեղեկայված է կրթության ավագ միջնակարգ և բարձրագույն մակարդակների միջև: Որպես հետմիջնակարգ կրթություն՝ այն դասակարգվում է ISCED 4-ի տակ՝ «ծրագրեր, որոնք տարածվում են կրթության ավագ միջնակարգ և հետմիջնակարգ սահմանների միջև միջազգային տեսանկյունից, նույնիսկ եթե կարելի է դրանք հստակ համարել որպես ավագ միջնակարգ կամ հետմիջնակարգ ծրագրեր ազգային համատեքստում» (Unesco, 1997, էջ 31):

Ֆրանսիան, Նորվեգիան, Սլովենիան, Իսպանիան և ՄԹ-ն չունեն հետմիջնակարգ, ոչ բարձրագույն ՆՄԿՈՒ: Նաև պարզ է դառնում, որ ՆՄԿՈՒ-ն այս մակարդակում երբեմն ուղղված է մասնագիտական գործընթացներին, որոնք հիմնականում իրականացվում են բարձրագույն կրթության միջոցով (Ավստրիայում): Իռլանդիայում և Կիպրոսում կա նաև աշխատաշուկայի ակտիվ քաղաքականության տարր, որը կապակցված է ՆՄԿՈՒ-ին այս մակարդակում: Երկու երկրներում էլ առկա է իրականացման մի տարր, որն առնչվում է գործազուրկներին աշխատաշուկա մուտք գործելու հնարավորության ապահովման հետ:

Բացի վերը նշված բացառություններից, հետմիջնակարգ կրթությունն ընդհանուր առմամբ թույլ է տալիս անհատ ուսանողներին ձեռք բերել մասնագիտացման բարձր մակարդակ իրենց ընտրած մասնագիտական ոլորտներում: Սա միտված է՝ տանելու հավասար եզրագծեր վարպետական մակարդակի հետ աշկերտական ուսուցման առումով և ապահովում է հմտություններ/ կարողություններ՝ մարդկանց թույլ տալու աշխատել անկախ կերպով: Գրեթե բոլոր երկրներում, ապահովելով հետմիջնակարգ ՆՄԿՈՒ, ուսանողները կարողանում են իրենց դասընթացներն իրականացնել մի շարք ուսումնական առարկաների թեքումով, չնայած երբեմն այն ունենում է ոլորտային կենտրոնացում (Ավստրիայում շեշտը դրվում է առողջապահության, իսկ Լիտվայում՝ գործարարության և գործերի կառավարչության վրա):

Ընդհանուր տպավորությունն այն է, որ ՆՄԿՈՒ-ն այս մակարդակում կազմում է համընդհանուր ՆՄԿՈՒ համակարգի փոքր մասը մասնակցության ցածր ցուցանիշով՝ համեմատած ավագ միջնակարգ դասընթացներին մասնակցության հետ: Այդուհանդերձ, Չեխիայի Հանրապետությունում, Գերմանիայում, Հունգարիայում և Իսլանդիայում շարունականական մասնագիտական կրթությունը ISCED 3-ում լավ ճանաչում գտած ուղի է,

նույնիսկ եթե այն համեմատաբար փոքրածավալ գործընթաց է՝ համեմատած մասնագիտական կրթության այլ մակարդակների հետ:

ԵՄ-ում ISCED 4-ը կազմում է ISCED բոլոր մակարդակներում (6) ներգրավվածության մոտավորապես 1%-ը⁶:

9.2. Մուտքի հնարավորության պահանջներ

Մուտքի հնարավորության համար ընդհանուր պահանջը կրթության ավագ միջնակարգ մակարդակը բարեհաջող ավարտելն է, սակայն կա նաև ձկունության որոշակի աստիճան.

- (ա) փորձն ընձեռում է մուտքի հնարավորություն որոշ դասընթացներ/հաստատություններ (Իռլանդիա),
- (բ) գործազուրկ լինելը կամ հավելյալ հմտությունների կարիք ունենալը՝ ձեռք բերելու մուտքի հնարավորություն զբաղվածություն, ևս կերաշխավորի մուտք այնպիսի երկրներում, ինչպիսիք են Ղանիան, Իտալիան և Շվեդիան,
- (գ) երբ մարդիկ չունեն պահանջվող հմտությունները/որակավորումները/փորձը, ապա ուսուցումն այստեղ ևս հնարավոր է՝ օգնելու մուտք գործել ՆՄԿՈՒ այս մակարդակում (Պորտուգալիայում):

Պահանջարկը հաճախ գերազանցում է առաջարկին, ուստի և, թեկնածուները պետք է դրսևորեն ոչ միայն մուտքի պահանջները բավարարելու, այլ նաև առկա ուսուցման իրականացումից օգուտ քաղելու ընդունակությունը:

9.3. Ուսումնական ծրագրեր

ՆՄԿՈՒ իրականացնող հաստատություններն այս մակարդակում ձգտում են ունենալ ինքնավարության որոշակի աստիճան ուսուցման բովանդակության և իրականացման համար: Կարելի է որոշարկել մի քանի կետեր.

- (ա) դասընթացները միտված են տևել միջինը մեկից երկու տարի,
- (բ) հաճախումները սովորաբար լինում են ողջ դասընթացի համար, սակայն դասընթացի կեսին մասնակցելու հնարավորությունն առկա է այն երկրներում, որտեղ գործազուրկ լինելը հանդիսանում է մուտքի նախապայման (Ղանիա և Շվեդիա),
- (գ) երբ դասընթացները մշակվում են հաստատությունների կողմից, դրանք սովորաբար ենթակա են լինում պետական իրավասու մարմինների հաստատմանը: Երբ դասընթացը

⁶ Eurostat-ը գրանցում է ISCED-ի մակարդակի որակավորումներին հավակնող մոտ 112 միլիոն մարդ ԵՄ-27-ում, որոնցից շուրջ 1.5 միլիոնը սովորում է ISCED մակարդակ 4-ում՝ 1.24%:

նախագծվում է՝ ապահովելու մուտքի հնարավորություն դեպի առևտուր կամ մասնագիտություն, ապա գործատուներն իրենց հերթին ևս ներգրավվում են (կամ պետական, կամ տեղական կերպով),

(դ) դասընթացներն ապահովվում են տեսական և գործնական ուսուցման ամբողջություն, իսկ երբեմն՝ աշխատանքի վրա հիմնված ուսուցում:

Իրականացումը և ուսումնական ծրագրերը տարասեռ են, քանի որ դրանք մեծ մասամբ սահմանվում են մասնագիտությանը հատուկ կարիքների միջոցով, որտեղ մեծ ուշադրություն է հատկացվում մասնագիտացմանը:

9.4. Ուսումնառության արդյունքներ

Ուսումնառության արդյունքներն են.

(ա) վկայական, որն ապացույց է դասընթացն ավարտելու, իսկ հաճախ՝ քննություն և գնահատում, որոնք տանում են ընդհանուր ձևակերպմամբ որակավորման՝ «բարձրագույն մասնագիտական որակավորում»,

(բ) մուտքի հնարավորության ապահովում դեպի աշխատաշուկա որակավորման համապատասխան մակարդակում,

(գ) կարիերայի առաջընթացի խթանում աշխատանքի մեջ գտնվողների համար (Ղանիայում),

(դ) արձագանքում հմտության առանձնահատուկ պակասորդներին տնտեսության մեջ (Իռլանդիայում),

(ե) երբ դասընթացի իրականացումն ավագ միջնակարգ մակարդակում կախված է տվյալ մասնագիտության պարապմունքների շարունակականությունից (ինչպես Իսլանդիայում, որտեղ վերոնշյալն աշկերտական ուղու շարունակությունն է), ապահովվում է մուտքի ուղղակի հնարավորություն տվյալ մասնագիտություն կամ արհեստ,

(զ) երբ դասընթացները սերտորեն կապակցված չեն մասնագիտությանը կամ արհեստին (ինչպես Ղանիայում և Էստոնիայում), ապա ձեռք բերված վկայականը կամ որակավորումը չի երաշխավորում մուտքի ուղղակի հնարավորություն տվյալ մասնագիտություն կամ արհեստ:

10. Բարձրագույն մակարդակի ՆՄԿՈՒ

10.1. Իրականացման կառուցվածքը

Բարձրագույն մակարդակում սովորաբար ընդունված է կատարել տարբերակում ակադեմիական և մասնագիտական հոսքերի միջև, չնայած գործնականում տեղի է ունենում որոշակի համընկնում նրանց միջև: ISCED-ը դասակարգում է 5A ծրագրերը որպես բարձրագույն «որոնք մեծամասամբ հիմնված են տեսության վրա և միտված են՝ ապահովելու բավարար որակավորումներ՝ մուտք գործելու հետազոտության բարձրագույն ծրագրեր և հմտության բարձր պահանջներ ունեցող մասնագիտություններ»: Ավելի մասնագիտորեն կողմնորոշված դասընթացները դասակարգվում են որպես 5B և «իրականում տևում են ավելի կարճ, քան 5A դասընթացները և կենտրոնանում են մասնագիտականորեն առանձնահատուկ հմտությունների վրա, որոնք նախատեսված են աշխատաշուկա մուտք գործելու համար, չնայած բազային տեսական որոշ դասընթացներ կարելի է անցնել համապատասխան ծրագրում» (Unesco, 1997, էջ 35):

Աղյուսակ 4-ում ամփոփված փաստերը ցույց են տալիս, որ մասնագիտական, բարձրագույն մակարդակի կրթության հայեցակարգը, որպես առանձին էություն, որոշ երկրներում ավելի կատարելագործված է, քան մնացյալում: Կարող են նաև առկա լինել սահմանման հետ կապված խնդիրներ այն երկրներում, որոնք ցանկանում են ընդունել, որ երրորդ մակարդակի կրթության որոշ տարրերն ավելի մասնագիտական են, քան մնացածը: Բակալավրի մակարդակ շնորհող բուհական որոշ դասընթացները ևս հաճախ մասնագիտական են (ճարտարագիտություն, դեղագործություն և այլն), սակայն դրանք դասակարգվում են ավելի շատ որպես ակադեմիական (ISCED 5A), քան մասնագիտական դասընթացներ (ISCED 5B):

ՆՄԿՈՒ-ում հնարավոր է նաև համընկնում շարունակական մասնագիտական կրթության և ուսուցման հետ, որտեղ մուտքը երաշխավորվում է այն մարդկանց համար, ովքեր որոշում են շարունակել իրենց ուսումնառությունն աշխատանքային որոշ ժամանակահատվածից հետո: Ինչպես երևում է ստորև, մուտքը դեպի ուսուցում այս մակարդակում երբեմն հնարավոր է աշխատանքային փորձի միջոցով:

Տարբեր երկրներում կան իրականացման երկու առանձին տեսակ, ինչպես որոշարկված է աղյուսակ 4-ում.

(ա) երկրներ բարձրագույն ՆՄԿՈՒ իրականացման ինստիտուցիոնալ առանձին հնարավորություններով,

(բ) երկրներ բարձրագույն մակարդակում ապահովվող մասնագիտականորեն կողմնորոշված, սակայն ընդհանուր, ակադեմիական հոսքի մեջ դասվող դասընթացներով (5A):

Աղյուսակ 4: Բարձրագույն ՆՄԿՈՒ իրականացման տեսակներ

Ինստիտուցիոնալ առանձին հնարավորություններ	Ոչ մի առանձին հնարավորություն
Բելգիա	Հունաստան
Չեխիայի Հանրապետություն	Կիպրոս
Դանիա	Հունգարիա
Գերմանիա	Լեհաստան
Էստոնիա	Պորտուգալիա
Իռլանդիա	Սլովակիա
Իսպանիա	Միացյալ Թագավորություն
Ֆրանսիա	Իսլանդիա
Իտալիա	
Լատվիա	
Լիտվա	
Ավստրիա	
Նիդեռլանդներ	
Սլովենիա	
Ֆինլանդիա	
Շվեդիա	
Նորվեգիա	

Մասնակցությունը ISCED 5B-ին համեմատաբար քիչ է՝ համեմատած ISCED 5-ի ընդհանուր մասնակցության, բացառությամբ Բելգիայից, Խորվաթիայից, Կիպրոսից, Էստոնիայից, Հունաստանից և Սլովենիայից: Գծապատկեր 4-ը տրամադրում է տվյալներ յուրաքանչյուր երկրի համար:

Այնտեղ, որտեղ առկա են ինստիտուցիոնալ առանձին հնարավորություններ, կրթությունն իրականացվում է ավելի շատ հաստատություններում, քան համալսարաններում (պոլիտեխնիկական, համալսարանական քոլեջներ և այլն), որոնք տալիս են առանձին որակավորում: Այնտեղ, որտեղ գոյություն չունեն առանձին հնարավորություններ, կրթությունը միտված է առնչվելու ավելի շատ մասնագիտորեն կողմնորոշված առարկաներին, որոնք ապահովվում են ընդհանուր, ակադեմիական բարձրագույն հոսքում,

սակայն ունեն ընդհանուր, ակադեմիական դասընթացների նույն առանձնահատկությունները:

Իտալիայում մասնագիտական բարձրագույն կրթությունը սահմանվում է համաձայն հետբուհական դասընթացների (ասպիրանտուրա) և այս առումով կազմում է բացառություն:

Մի քանի երկրներում, ինչպիսիք են Հունաստանը, Իսլանդիան, Նորվեգիան, չկա ոչ մի տարբերակում մասնագիտական (ISCED 5B) և ակադեմիական (ISCED 5A) բարձրագույն կրթության միջև: Որոշ երկրներում մասնագիտացած այնպիսի հաստատությունները, ինչպիսիք են *Fachhochschulen*-ն Ավստրիայում, պոլիտեխնիկը Ֆինլանդիայում և տեխնոլոգիայի ինստիտուտներն Իռլանդիայում, տրամադրում են կիրառելի բարձրագույն կրթություն: Մնացած երկրներում այն իրականացվում է պետական կամ մասնավոր համալսարանական համակարգի միջոցով:

10.2. Մուտքի հնարավորության պահանջներ


Մուտքի հնարավորությունը մասնագիտական բարձրագույն կրթություն կախված է ավագ միջնակարգ մակարդակի կրթությունը բարեհաջող ավարտելուց (համապատասխան որակավորման ձեռքբերմամբ) սովորաբար բարձր մակարդակով (ոչ թե միջին կատարողականությամբ): Այնուամենայնիվ, հնարավորություն է ընձեռվում ձեռք բերել մուտքի հնարավորություն հետևյալի միջոցով.

- (ա) ընդունելության քննություն (Նիդեռլանդներում, եթե անհատը չունի ընդունելության համար անհրաժեշտ ֆորմալ որակավորումներ),
- (բ) համապատասխան փորձ (Իռլանդիայում և Ֆինլանդիայում, հատկապես մեծահասակ մասնակիցների համար):

Եթե երկրներն ընդհանուր առմամբ պահանջում են ավագ միջնակարգ մակարդակի կրթության բարեհաջող ավարտ բարձրագույն մակարդակի կրթություն մուտք գործելու համար, ապա մասնագիտական դասընթացներ համար (դրանք տարբերվում են բարձր պահանջ ներկայացնող դասընթացներից, որտեղ պահանջվում է բարձրագույն ակադեմիական կրթություն մուտքի համար) կա հայեցողության որոշակի աստիճան, որը տրամադրվում է դասընթացներ իրականացնողներին: Սա ավելի շատ կախված է դասընթացի տեսակից և մակարդակից, քան երկրից: Ուստի և, շեշտը դրվում է փորձի և ընդունելության քննություն տալու տարբերակի վրա:

Որոշ դասընթացների համար մուտքի մրցույթը շատ խիստ է լինում: Ընդհանրապես պահանջարկն ավելի մեծ է ընդհանուր ակադեմիական հոսքի (5A), քան մասնագիտական հոսքի (5B) համար:

Գծապատկեր 4: ISCED 5b-ում ներգրավված բոլոր ISCED 5 ուսանողների տոկոսային հարաբերակցություն



10.3. Ուսումնական ծրագրեր

Մասնագիտական բարձրագույն մակարդակի կրթություն իրականացնող հաստատությունների առանձնահատկություններն են.

- (ա) ինքնավարություն իրենց ուսումնական ծրագրերը սահմանելիս՝ կրթության նախարարների և համապատասխան գործակալությունների կողմից ամրագրված որոշակի սահմանափակումներով,
- (բ) հաստատությունների կողմից սահմանված ուսումնական ծրագրերը պետք է համապատասխանեն կրթության նախարարների և համապատասխան գործակալությունների կողմից ամրագրված չափորոշիչներին,
- (գ) ուսանողների գնահատումն իրականացվում է հաստատությունների կողմից, սակայն իրենց չափորոշիչները նույնպես ենթակա են արտաքին գնահատման ազգային գործակալությունների կողմից՝ համաձայն բարձրագույն կրթության:

Դասընթացի տեսակներն էապես տարբերվում են ԵՄ-ում.

- (ա) լիարժեք ժամանակաքանակով դասընթացներ, որոնք տևում են երկուսից չորս տարի՝ շնորհելով դիպլոմի մակարդակի որակավորում (Դանիայում, որտեղ երկարատև դասընթացը հասանելի է բիզնես դպրոցներում, կամ ՄԹ-ում, որտեղ գործում են ենթաբակալավրի մակարդակի պարզներ),
- (բ) որոշ երկրներում առաջարկվող կարճաժամկետ դասընթացներ (մեկից երկու տարի), որոնց նպատակն է զարգացնել արդեն աշխատանք ունեցող մարդկանց հմտությունները կամ արձագանքել հմտության պակասորդներին (Իռլանդիայում գործում են անցումային դասընթացներ մարդկանց համար՝ փոխարկելու նրանց ունեցած որակավորումներն այն որակավորումների, որտեղ առկա են հմտության պակասորդներ):

Նկատելի է մոդուլային դասընթացների որոշակի շարժընթաց, որոնք ներդրվում են մասնագիտական ոլորտ: Օրինակ՝ Ֆինլանդիայում գործում են մասնակի պարզներ այն ուսանողների համար, ովքեր անցել են համընդհանուր ծրագրի մի քանի տարրերը: Դասընթացները հիմնված են գործնական և տեսական գիտելիքի ձեռքբերման վրա, սակայն աշխատանքային փորձի կարևորությունն այնքան էլ ակնհայտ չէ շատ դեպքերում:

ԵՄ անդամ նոր պետությունները շարժվում են դեպի Եվրոպական կրեդիտային փոխանցման համակարգի իրագործումը:

Մասնագիտական բարձրագույն մակարդակի կրթության զարգացումը նոր երևույթ է այնպիսի երկրներում, ինչպիսիք են Լատվիան, Լիտվան և Ավստրիան: Դրա հայտնվելու պատճառն այն պարզ գիտակցումն է, որ մարդկանց անհրաժեշտ է բարձրագույն մակարդակի հմտություններ՝ զարգացնելու իրենց կարիերաները որոշ մասնագիտություններում կամ արդյունաբերական բնագավառներում: Ուստի և, մասնագիտական կրթությունը հաճախ նպատակաուղղված է արդյունաբերության այն հատվածներին, ինչպիսիք են տուրիզմը, ճարտարագիտությունը և շինարարությունը, որոնք մարդկանց թույլ են տալիս ձեռք բերել բարձրագույն մակարդակի հմտություններ մասնագիտական ուղու միջոցով: Այնտեղ, որտեղ գործում է մասնագիտական կրթություն երրորդային մակարդակում, ապա այն միտված է՝ հանգեցնելու ենթաստիճանային շնորհման, դիպլոմի մակարդակի որակավորման, որը գնահատվում է կամ քննությամբ, կամ շարունակական գնահատմամբ, իսկ երբեմն էլ՝ երկուսով:

Դասավանդման և գնահատման մոտեցումները ևս տարբեր են: Որոշ երկրներում անհրաժեշտ է հետամուտ լինել գործնական աշխատանքային փորձին (Էստոնիայում, գործունեության 30%)՝ շարունակական գնահատումից և/կամ քննությունից կախված որակավորմամբ:

Այս մակարդակում ՆՄԿՈՒ-ն կարող է լինել անցումային գործընթացի մի մաս, որը թույլ է տալիս մինչև այս փուլը մասնագիտական ուղի անցած ուսանողներին մուտք գործել բուհական համակարգ: Այս եղանակով, բարձրագույն մակարդակի մասնագիտական կրթությունը կարող է դիտարկվել որպես գործընթացի մի մաս, որն ուսանողներին իրենց պետական կրթական համակարգի բարձրագույն մակարդակում առաջընթացի հնարավորություն է տալիս (համալսարանների կողմից առաջին և ավելի բարձր աստիճանների շնորհում):

10.4. Արդյունքներ

Հիմնական արդյունքը գնահատման և քննության միջոցով ձեռք բերված որակավորումն է: Այնտեղ, որտեղ գործում են ինստիտուցիոնալ առանձին հնարավորություններ կրթություն իրականացնելու համար, ապա դա հանգեցնում է որակավորման ձեռքբերմանը (սովորաբար ընդունվում է որպես դիպլոմ), որը տարբերվում է ընդհանուր ակադեմիական հոսքի (5A) առաջին փուլում տրամադրվող բակալավրի աստիճանի շնորհումից: Տեսականորեն, մասնագիտական որակավորման ձեռքբերումը տալիս է մուտքի հնարավորություն համալսարաններ՝ ստանալու բակալավրի մակարդակի շնորհում կամ

հետբուհական (ասպիրանտուրա) որակավորում, սակայն գործնականում հիմնական արդյունքն աշխատաշուկա մուտք գործելն է:

11. ՆՄԿՈՒ տիպաբանություն

Բազմիցս քննարկումներ են ծավալվել ՆՄԿՈՒ ազգային համակարգերի բարեփոխումների շուրջ այն պատճառով, որ դրանք կարելի է համաձայնեցնել աշխատաշուկայի ներկայիս և հետագա կարիքներին: Բարեփոխման մղող շարժիչ ուժերը երկուսն են.

- (ա) անցում, որը մարդկանց թույլ է տալիս շարժվել ցածր միջնակարգ մակարդակի կրթության ձևաչափերի միջև (ակադեմիական, դպրոցի վրա հիմնված մասնագիտական կրթություն և աշկերտություն) առանց տույժի,
- (բ) առաջընթաց, որը երիտասարդներին թույլ է տալիս ՆՄԿՈՒ միջոցով առաջ ընթանալ դեպի կրթության ձեռքբերման բարձրագույն մակարդակներ:

Այս հասկացությունների միաձուլումը տալիս է ցուցում այն մասին, թե ինչպես է ամբողջություն կազմող ՆՄԿՈՒ-ն ապահովում կրթության կապակցված ձևաչափ, և ինչպես է այն լիարժեքորեն ինտեգրված ուսումնառության ակադեմիական հոսքին: Հիմնվելով այս երկու հիմնահարցերի վրա՝ աղյուսակ 5-ը տրամադրում է ՆՄԿՈՒ համակարգերի դասակարգումը, իսկ աղյուսակ 6-ը՝ երկրների մոդելները:

Աղյուսակ 5: ՆՄԿՈՒ ինտեգրման տիպաբանություն՝ չափանիշներ

Ինտեգրում	Մակարդակ			
	Ցածր միջնակարգ մակարդակ	Ավագ միջնակարգ մակարդակ, մասնագիտական ուսուցում	Աշկերտություն	Բարձրագույն
Այո	ՆՄԿՈՒ-ն իրականացվում է որպես ընդհանուր կրթության լիարժեք ինտեգրված մաս	Համատեղ մշակվող ուսումնական ծրագրերի որոշակի աստիճան, այլ հոսքեր անցնելու հնարավորություն	Շեշտադրում ընդհանուր կրթության վրա, այլ ծրագրեր անցնելու հնարավորություն	Բարձրագույն կրթությունը որպես համալսարանական ընդհանուր համակարգի մաս, բակալավրի մակարդակ անցնելու հնարավորության հեշտացում

Ոչ	ՆՄԿՈՒ առանձին համակարգի առկայություն	Առանձին դասընթացներ՝ անցումի և/կամ առաջընթացի փոքր հնարավորությամբ	Ուսուցման առանձին ծրագիր, անցման անհավանականություն, առաջընթացի սահմանափակ հնարավորություն	Բարձրագույն կրթությունն իրականացվում է առանձին հաստատությունների կողմից, բակալավրի մակարդակ անցնելու անորոշություն
----	-----------------------------------------------	-----------------------------------------------------------------------------------	-----------------------------------------------------------------------------------------------------------	-----------------------------------------------------------------------------------------------------------------------------------------

Աղյուսակ 6: ՆՄԿՈՒ ինտեգրման տիպաբանություն՝ երկրներ (Վ)


Ինտեգրում	Մակարդակ		
	Ցածր միջնակարգ մակարդակ	Ավագ միջնակարգ մակարդակ, մասնագիտական ուսուցում	Աշկերտություն (Բ)
Այո	Բելգիա	Բելգիա	Գերմանիա
	Չեխիայի Հանրապ.	Չեխիայի Հանրապ.	Հունաստան
	Էստոնիա	Գերմանիա	Ֆրանսիա
	Իսպանիա	Էստոնիա	Իտալիա
	Իտալիա	Ֆրանսիա	Հունգարիա
	Ավստրիա	Կիպրոս	Նիդեռլանդներ
		Հունգարիա	Լեհաստան
		Ավստրիա	Նորվեգիա
		Լեհաստան	
		Սլովենիա	
		Շվեդիա	
		Նորվեգիա	
Ոչ	Լատվիա	Դանիա	Բելգիա
	Լիտվա	Իռլանդիա	Էստոնիա
	Նիդեռլանդներ	Հունաստան	Իռլանդիա
	Լեհաստան	Իսպանիա	Իսպանիա
	Պորտուգալիա	Իտալիա	Կիպրոս
	Սլովակիա	Լատվիա	Լատվիա
		Լիտվա	Ավստրիա
		Նիդեռլանդներ	Պորտուգալիա
		Պորտուգալիա	Սլովենիա

		Միացյալ Թագ.	Ֆինլանդիա
			Միացյալ Թագ.
			Իսլանդիա

- (^ա) Բարձրագույն մակարդակում ՆՄԿՈՒ-ն դասակարգելու համար օգտագործված տարրեր սահմանումների պատճառով հնարավոր չի եղել որոշարկել երկրները:
- (^բ) Մինչդեռ, որոշ երկրներ նշեցին, որ իրենց աշկերտական ծրագրերն ինտեգրված են ավագ միջնակարգ մակարդակի ՆՄԿՈՒ-ին, Լիտվան, Սլովակիան և Շվեդիան նշեցին, որ չեն առաջարկում աշկերտական ծրագրեր:

Գծապատկեր 5-ը ցույց է տալիս իրենց ՆՄԿՈՒ համակարգերը զարգացնելու համար երկրների կողմից ընդունված ընդհանուր երկու ուղիները: Առաջինը՝ Ուղի Ա, հիմնված է ՆՄԿՈՒ համակարգն ընդհանուր կրթության համակարգին միավորելու վրա: Այստեղ հնարավոր է հեշտությամբ անցում կատարել մասնագիտական և ակադեմիական հոսքերի միջև՝ անցում կատարելիս ստիպված չլինելով կրել կրկին անգամ վերսկսելու տույժը՝ երաշխավորելով, որ անցումը չի խոչընդոտում առաջխաղացմանը: Երկրորդը՝ Ուղի Բ, հիմնված է առաջընթաց և անցում կատարելու հնարավորություն թույլ տալու վրա, սակայն ամփոփվում է ՆՄԿՈՒ առանձին համակարգում (ուսումնական առանձին ծրագրեր, առանձին հաստատություններ): Բ Ուղու վերջում եթե անհատը ձեռք է բերում բարձրագույն կրթություն, ապա դա լինում է մասնագիտական, մինչդեռ Ա Ուղու դեղքում հավանականություն կա, որ դա կարող է լինել կամ ակադեմիական, կամ մասնագիտական:

Գծապատկեր 5: ՆՄԿՈՒ ուղիներ և ընդհանուր կրթության համակարգ



Երկրները միմյանցից տարբերվում են ըստ Ա կամ Բ ուղիների ընտրության և Ա կամ Բ կետերին հասնելուն ուղղված քայլերի: Շատ առումներով անդամ նոր, հատկապես նախկին Խորհրդային Հանրապետության պետությունները (Բալթյան պետություններ) ամեն ինչ սկսում են դեռ նոր, քանի որ նրանք արդեն չեն օգտվում իրենց նախկին մոդելներից: Անդամ ավելի հին պետություններում բարեփոխումների գործընթացը կարող է լինել խրթին, քանի որ առկա ուղիներն ամուր հաստատված են: Այնուամենայնիվ, անդամ պետություններն ունեն անցնելու երկար ճանապարհ:

12. Եզրակացություն

Ցանկացած երկրում ՆՄԿՈՒ-ն ունի խնդիր՝ բավարարելու փոփոխվող և՛ առկա, և՛ հետագա պահանջներն աշխատաշուկայում: Այս մարտահրավերը միջազգային ընդլայնված մրցունակության և կառուցվածքային փոփոխության էական մասն է կազմում, որոնց վրա այն ունենում է իր ազդեցությունն ազգային տնտեսություններում՝ գումարած սոցիալապես մերժված մարդկանց օգնելու կարիքը: Առաջինն իրեն ավելի շատ դրսևորել է աշկերտական ուսուցման մեջ, որտեղ այն բազմիցս կենտրոնացել է արդյունաբերական գործունեության ավանդական ոլորտների վրա: ՆՄԿՈՒ համակարգերի ընդհանուր մարտահրավերը երիտասարդներին հմտություններ և կարողություններ ապահովելն է, որպեսզի նրանք կարողանան մուտք գործել աշխատաշուկա, պահպանել իրենց կարգավիճակն ու զարգանալ այնտեղ՝ հետևաբար պայմաններ ստեղծելով իրենց աշխատունակության համար:

Չնայած ՆՄԿՈՒ համակարգերից շատերը ենթարկվել են բարեփոխման որոշակի գործընթացի, սակայն վիճարկելի հարց է, թե արդյո՞ք նրանք հասել են իրենց մասնակիցներին կայուն աշխատունակությամբ ապահովելու նպատակին: Այս հիմնախնդրին ուղղված մի մոտեցում է անհատներին տրամադրվող գիտելիքի պաշարը մեծացնելը. շեշտը դրվում է ընդհանուր և մասնագիտական կրթության վրա: Նկատվում է այս երևույթի տեղի ունենալու որոշակի աստիճան, հատկապես ոչ աշկերտական մասնագիտական հոսքում (Գծապատկեր 1), բայց առկա է նաև քիչ կենտրոնացում մասնագիտական բազմաթիվ հոսքերի վրա: Հարց է ծագում նաև, թե որքանո՞վ սա կարող է ծառայել մարդկանց իրենց աշխատանքային կյանքում: Ուստի և, ցկյանս ուսումնառության կարևորությունը կախված է ՆՄԿՈՒ ազգային համակարգերի կողմից դրված հիմքերից:

Շուկայական մրցակցությունը հանգեցնում է ՆՄԿՈՒ ազգային համակարգերի մարտահրավերների ընդհանուր մի շարքի, և որոշ չափով նկատվում է նմանակման միտում, քանի որ համակարգերը սովորում են միմյանցից՝ այս մարտահրավերներին արձագանքելիս: Եթե մարտահրավերը նույնն է, ապա դա չի նշանակում, որ շեշտը պետք է մեծամասամբ դնել արձագանքների ընդհանուր լինելու վրա: Ազգային համակարգերի կառուցվածքը, կանոնակարգը և կողմնորոշումը բականաչափ տարբեր են միմյանցից, քանի որ երկրի մակարդակում փոփոխության արդյունքները կարող են տարբեր լինել: Օրինակ՝ կա հսկայական տարբերություն Գերմանիայի դուալ համակարգի և ՄԹ-ի մասնագիտական համակարգի միջև:

Ազգային համակարգերի այս համառոտ վերանայումից կարելի է որոշարկել մի քանի խմբավորում.

- (ա) Եվրոպական հյուսիսային երկրներ՝ համատեղ բանակցության երկարամյա ավանդույթով, որտեղ սոցիալական գործընկերները սահմանել են կանոնակարգող համակարգ ՆՄԿՈՒ բովանդակությունը սահմանելու համար,
- (բ) Եվրոպական արևելյան համակարգեր, որոնք զուգահեռաբար ստիպված են եղել իրենց ՆՄԿՈՒ համակարգերը հարմարեցնել շուկայական տնտեսության կարիքներին և ընդլայնված մրցակցությանը,
- (գ) մեծապես շուկային միտված տնտեսություններ՝ սոցիալական գործընկերության քիչ ավանդույթով (ՄԹ և, մինչ համեմատաբար վերջերս, Իռլանդիա), որտեղ գործատուի ծայնը կարևոր է:

Ամփոփելով այս ամենը՝ Եվրոպայի ՆՄԿՈՒ վերաբերյալ կարելի է կայացնել հետևյալ եզրակացությունները.

- (ա) գոյություն ունի տարբեր դասընթացների, նրանց իրականացման և կառավարման եղանակների մեծ շարք, սակայն մակրո մակարդակում ի հայտ է գալիս ընդհանուր մի բան (ինչպես նկարագրված է սույն զեկույցի հիմնական մասում և ամփոփված է ստորև),
- (բ) ՆՄԿՈՒ ընդհանուր հիմնավորումը նույնն է բոլոր երկրների համար՝ նախապատրաստական աշխատանք զբաղվածության համար,

- (գ) ՆՄԿՈՒ-ն դեռևս ունի համեմատաբար ցածր կարգավիճակ, քան ակադեմիական կրթությունը: Որոշ երկրների հաջողվել է խուսափել այս տարբերակումից՝ միավորելով ակադեմիական և մասնագիտական հոսքերը, բայց օրինակ Նիդեռլանդներում հակված չեն՝ միավորելու ՆՄԿՈՒ և ակադեմիական հոսքերը,
- (դ) Գերմանիան աչքի է ընկնում իր դուալ համակարգի միջոցով ՆՄԿՈՒ-ին մասնակցության բարձր մակարդակներով,
- (ե) ջանքեր են գործադրվում՝ կատարելագործելու ՆՄԿՈՒ կարգավիճակը որոշ գործընթացների միջոցով, որոնք նախագծված են՝ օժանդակելու դրա արժեքին և կարևորությանը,
- (զ) ՆՄԿՈՒ-ն հաճախ ասես ապահովագրական համակարգ լինի այն անձանց համար, ովքեր ձեռք չեն բերել կրթության բավարար մակարդակ պարտադիր կրթության համակարգում և կանգնած են սոցիալական մերժման ռիսկի առջև,
- (է) ՆՄԿՈՒ-ն խրախուսելուն ուղղված հատուկ քայլերը հաճախ կենտրոնանում են անկարողունակ խմբերի վրա՝ փորձելով նրանց վերաներգրավել կրթության և ուսուցման մեջ,
- (ը) որոշ դեպքերում ՆՄԿՈՒ-ն կարող է ուստնակ հանդիսանալ բարձրագույն կրթության համար. սա դեռևս համընդհանուր բնույթ չի կրում, սակայն ընդհանուր միտում կա՝ ուղղված առաջընթացի այս հնարավորությանը,
- (թ) սոցիալական գործընկերներն ընդհանուր առմամբ սերտորեն ներգրավված են դասընթացի նախագծման և իրականացման աշխատանքում (բայց ավելի քիչ այն երկրներում, որտեղ աշխատաշուկայի նկատմամբ գործում է ավելի շատ անգլո-սաքսոնական մոտեցում), իսկ գործատուներն ունեն էական դերակատարություն գրեթե ցանկացած դեպքում՝ երաշխավորելու, որ աշխատանքի առաջարկը բավարարում է պահանջարկը,
- (ժ) տեղական իրականացումն ընդհանուր է, և նկատվում է ՆՄԿՈՒ-ին որոշակի լիազորությունների հանձնելու միտում, որտեղ անհատ ուսումնարանները և ուսուցման կենտրոններն ունեն ուսումնառության իրականացման ինքնավարության որոշակի աստիճան,

- (ի) նկատվում է ուսումնառության անհատականացման միտում, որտեղ առկա է առանցքային ուսումնական ծրագիր, սակայն ուսուցումը հարմարեցվում է անհատական կարիքներին և ձգտումներին,
- (լ) շատ, բայց ոչ բոլոր դեպքերում իրականացումը ֆինանսավորվում է հրապարակավ,
- (խ) աշխատանքային փորձի ու ֆորմալ ուսուցման և տեսական ու գործնական ասպեկտների միջև տարբերությունը տարբեր դասընթացներում բավականին նման են առանձին երկրներում: ՆՄԿՈՒ համակարգում երիտասարդներին լայնածավալ կրթություն ապահովելիս շեշտը դրվում է ընդհանուր կրթության վրա՝ թվաբանություն, գրաձանաչություն, օտար լեզուներ և այլն:

Վերոնշյալներն ընդհանուր միտումներն են, չնայած պարտադիր չէ, որ դրանք առկա լինեն բոլոր երկրներում: ՆՄԿՈՒ-ն տարբեր է և՛ ըստ երկրի, և՛ ըստ իրականացման տեսակի կամ ձևաչափի, սակայն վերը նշված կետերն ամփոփում են Եվրոպայի ՆՄԿՈՒ համակարգի հիմնական միտումները:

13. Երկրների կոդեր

BE	Բելգիա
BG	Բուլղարիա
CZ	Չեխիայի Հանրապետություն
DK	Դանիա
DE	Գերմանիա
EE	Էստոնիա
IE	Իռլանդիա
EL	Հունաստան
ES	Իսպանիա
FR	Ֆրանսիա
IT	Իտալիա

HR	Խորվաթիա
MK	Նախկին Հարավսլավիայի Մակեդոնական Հանրապ.
IS	Իսլանդիա
JP	Ճապոնիա
NO	Նորվեգիա
CH	Շվեյցարիա
TR	Թուրքիա
US	Ամերիկայի Միացյալ Նահանգներ

CY	Կիպրոս
LV	Լատվիա
LT	Լիտվա
LU	Լյուքսեմբուրգ
HU	Հունգարիա
MT	Մալթա
NL	Նիդեռլանդներ
AT	Ավստրիա
PL	Լեհաստան
PT	Պորտուգալիա
RO	Ռումինիա
SI	Սլովենիա
SK	Սլովակիա
FI	Ֆինլանդիա
SE	Շվեդիա
UK	Միացյալ Թագավորություն

14. Գրականության ցանկ

Cedefop, Պատրիցիա Լիպինսկա, *Մասշտաբների մեծացում 2010թ.-ին՝ մասնագիտական կրթության և ուսուցման վերազնահատում*: Լյուքսեմբուրգ, Հրատարակությունների գրասենյակ, 2007: (Cedefop-ի Տեղեկատու շարք): Տեղադրված է ինտերնետում՝ http://www.trainingvillage.gr/etv/Upload/Information_resources/Bookshop/474/4060_en.pdf [տեղադրվել է 11.09.2008]:

Cedefop, Է. Սիֆրայդ, *ՄԿՈՒ որակի ցուցիչներ՝ ընդլայնելու եվրոպական համազործակցությունը*: Լյուքսեմբուրգ, Հրատարակությունների գրասենյակ, 2007թ: (Cedefop-ի Panorama շարք, 134): Տեղադրված է ինտերնետում՝ http://www.trainingvillage.gr/etv/Upload/Information_resources/Bookshop/469/5167_en.pdf [տեղադրվել է 11.09.2008]:

ԵՄ Խորհուրդ, *Նախագահության եզրակացություն, Լիսաբոնի 2000թ. մարտի 23-ի և 24-ի եվրոպական խորհուրդ: Բրյուսել, Եվրոպական Միության Խորհրդի գլխավոր քարտուղարություն, 2000:*

Եվրոպական Հանձնաժողով, *Մասնագիտական կրթության և ուսուցման եվրոպացի նախարարների և Եվրոպական Հանձնաժողովի 2002թ. նոյեմբերի 29-ին ու 30-ին Կոպենհագենում գումարված նիստի հռչակագիրը մասնագիտական կրթության և ուսուցման ոլորտում ընդլայնված համագործակցության վերաբերյալ: Բրյուսել, Եվրոպական Հանձնաժողով, 2002:*

Եվրոպական Հանձնաժողով, *Մաստրիխտի կոմյունիկեն մասնագիտական կրթության և ուսուցման ոլորտում եվրոպական ընդլայնված հետազա գերակայությունների վերաբերյալ, Կոպենհագենի 2002թ. նոյեմբերի 30-ի հռչակագրի վերանայում: Բրյուսել, Եվրոպական Հանձնաժողով, 2004:*

Եվրոպական Հանձնաժողով, *Հելսինկիի կոմյունիկեն մասնագիտական կրթության և ուսուցման ոլորտում եվրոպական ընդլայնված համագործակցության վերաբերյալ, Մասնագիտական կրթության և ուսուցման եվրոպացի նախարարների, եվրոպական սոցիալական գործընկերների և Եվրոպական Հանձնաժողովի 2006թ. դեկտեմբերի 5-ին Հելսինկիում գումարված նիստի կոմյունիկե՝ վերանայելու Կոպենհագենի գործընթացի գերակայությունները և ռազմավարությունները: Բրյուսել, Եվրոպական Հանձնաժողով, 2006ա:*

Եվրոպական Հանձնաժողով, *Հանձնաժողովի զեկույցը Խորհրդին և Եվրոպական Կառավարությանը, համալսարանների արդիականացման օրակարգ՝ կրթություն, հետազոտություն և նորարարություն: Լյուքսեմբուրգ, Հրատարակությունների գրասենյակ, 2006բ (COM (2006), 208 Վերջնական):*

Եվրոպական Հանձնաժողով, Eurydice, Eurostat, *Եվրոպայում բարձրագույն կրթության վերաբերյալ առանցքային տվյալներ: 2007թ. հրատարակություն: Լյուքսեմբուրգ, Հրատարակությունների գրասենյակ, 2007:*

Լիտչի՝ հմտությունների վերանայում, *Բարգավաճում բոլորի համար գլոբալ տնտեսությունում, համաշխարհային դասի հմտություններ, վերջնական զեկույց: Լոնդոն, Ամրակայված գրասենյակ, 2006:*

Թ. Լենի, *Լիսաբոնի նպատակի իրականացում, ՄԿՈՒ օժանդակություն, հիմնադրույթներ*: Լոնդոն, QCA, 2004ա:

Թ. Լենի, *Լիսաբոնի նպատակի իրականացում, ՄԿՈՒ օժանդակություն: Վերջնական զեկույց*: Բրյուսել, Եվրոպական Հանձնաժողով, 2004բ:

Ա. Սապիր, *Օրակարգ աճող Եվրոպայի համար*: Օքսֆորդ, Օքսֆորդի համալսարանի մամուլ, 2004:

ՏՀԶԿ (OECD), *Կրթություն առաջին հայացքից 2006*: Փարիզ, ՏՀԶԿ, 2006:

Unesco, *Կրթության՝ միջազգային ստանդարտ դասակարգում, ISCED 1997*: Փարիզ, Unesco, 1997: